

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ԵՐՐՈՐԴ ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

**Հայաստանում ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...» Կոնվենցիայի
իրականացման մասին**

ԵՐՐՈՐԴ ԱԶԳԱՅԻՆ ՁԵԿՈՒՅՑ

Հայաստանում ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...» Կոնվենցիայի իրականացման մասին

Երրորդ Ազգային Ձեկույցը պատրաստվել է ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...»
Կոնվենցիայի պահանջներին համապատասխան և ընդգրկում է տեղեկատվություն
Կոնվենցիայի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետությունում
2002-2006 թթ. ձեռնարկված միջոցառումների մասին

Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարությունը
շնորհակալություն է հայտնում «Անապատացման դեմ պայքարի...» Կոնվենցիայի
Քարտուղարությանը Երրորդ Ազգային Ձեկույցի պատրաստման ընթացքում ցուցաբերած
ֆինանսական և մեթոդական օժանդակություն ցուցաբերելու համար

Ձեկույցը Կոնվենցիայի Քարտուղարությանն է ներկայացվել 30 մայիսի 2006թ.

С Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարություն

Հեռ. (+374-10) 521099
Ֆաքս . (+374-10) 585349
Էլ. փոստ. interdpt@rambler.ru

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՄՓՈՓՈՒՄ.....	4
ԲԱԶՄՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	8
ԳԼՈՒԽ 1. ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ/ՎԱՍ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ.....	11
1.1. Ազգային ռազմավարություններ և պլաններ.....	11
1.2. Նոր ցուցանիշներ, որոնք ընդգրկվել են 10./COP.5-ի որոշմանը համապատասխան.....	13
ԳԼՈՒԽ 2. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԻՋՈՑՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌՎԵԼ ԵՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ.....	14
2.1. Գործողությունների ազգային ծրագիրը որպես տնտեսական և սոցիալական զարգացման ազգային պլանի բաղադրիչ.....	14
2.2. Անապատացման դեմ պայքարի հետևողական և արդյունավետ ինստիտուցիոնալ հիմունքները.....	15
2.3. Համաձայնեցված և գործառնական նորկատիվա-իրավական հիմքեր.....	17
ԳԼՈՒԽ 3. ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ՝ ՕԺԱՆՂԱԿԵԼՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ.....	19
ԳԼՈՒԽ 4. ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ՝ ՕԺԱՆՂԱԿԵԼՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ-ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿՈՂՄԵՐԻ ՈՒ ԱՅԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ՍՈՒՔՅԵԿՏՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՆԸ.....	23
ԳԼՈՒԽ 5. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԿԱՍ ՊԼԱՆԱՎՈՐՎՈՒՄ ԵՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ, ՆԵՐԱՌՅԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎԱՆ, ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԵՆԱՆԻՋՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ, ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԸՆԴՂԱՅՆՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԵՐԱՇԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.....	24
5.1. Անցած փորձի պատշաճ վերլուծությունը.....	24
5.2. Անապատացման դեմ պայքարի ուղղությամբ մշակված տեխնիկական ծրագրերը և գործառնական համալիր նախագծերը.....	25
5.3. Գործողությունների ծրագիր, որն իրականացվում է Կոնվենցիայով որոշված գերակա ուղղություններին համապատասխան.....	27
5.4. Ենթատարածաշրջանային և տարածաշրջանային գործողությունների ծրագրերին կապվածության աստիճանը.....	27
ԳԼՈՒԽ 6. ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱՑՈՒՄՆԵՐ ՕԺԱՆՂԱԿԵԼՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՈՐՈՆՔ ՍՏԱՑՎԵԼ ԵՆ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ, ՆՇԵԼՈՎ ԿԱՐԻՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	28
ԳԼՈՒԽ 7. ԶԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ, ՈՐՈՆՔ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ ԵՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ.....	30
Հավելվածներ Ազգային Ձեկույցին.....	31
Հավելված 1 ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...» Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության նկարագիրը.....	31
Հավելված 2 Անապատացման դեմ պայքարի միջոցառումների իրականացմանն ուղղված ՀՀ 2002-2006թթ. պետական բյուջեներով նախատեսված ծախսեր.....	39
Հավելված 3 «Անապատացման դեմ պայքարի...» կոնվենցիայի ներքո ՀՀ պետական բյուջեից պայմանագրային ֆինանսավորման միջոցով իրականացվող ծրագրեր.....	42
Հավելված 4 Շրջակա միջավայրի և բնական պաշարների մոնիտորինգի էկոլոգիական ինդիկատորների և դրանց վերաբերյալ տվյալների տրամադրման համար պատասխանատու մարմինների ցանկ.....	42
Հավելված 5 ՀՀ-ում կատարված անտառվերականգնման աշխատանքների ծավալները.....	45

ԱՄՓՈՓՈՒՄ

ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...» Կոնվենցիայի Քարտուղարությանը Երկրորդ Ազգային Ձեռնարկի ներկայացումից հետո ընկած ժամանակահատվածում Հայաստանում մշակվել և իրականացվում են մի շարք ազգային և տարածաշրջանային ծրագրեր, որոնք առնչվում են անապատացման դեմ պայքարի հիմնախնդրին և ունեն ռազմավարական նշանակություն:

1. 2003 թ. հունիսի 17-ին ընդունվել է **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003-2007 թթ. գործունեության ծրագիրը»**.
2. ՀՀ կառավարության 08.08.2003թ. № 994-Ն որոշմամբ հաստատվել է **«Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը»**.
3. ՀՀ կառավարության 06.11.2003թ. № 1522-Ն որոշմամբ հաստատվել է **«Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը»**.
4. ՀՀ կառավարության 17.06.2004թ. № 985-Ն որոշմամբ հաստատվել է **«ՀՀ 2005-2007 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը»**.
5. **Բնապահպանության ոլորտում** մշակվել և/կամ գործողության մեջ են ռազմավարական նշանակության հետևյալ ծրագրերը.
 - ՀՀ կառավարության 02.12.2004թ. № 1840-Ն և 16.03.2005 թ. № 880-Ն որոշումներով հաստատվել են բնապահպանական միջազգային կոնվենցիաներից, այդ թվում ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...» Կոնվենցիայից բխող 2005-2010 թթ. Հայաստանի պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկերը
 - 2003թ. ավարտվել է «Գիլի լճի վերականգնման» ծրագրի մշակումը.
 - ՀՀ կառավարության 26.12.2002 թ. № 54 որոշմամբ հավանություն է տրվել «Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարության և գործողությունների ազգային ծրագրին».
 - ՀՀ կառավարության 30.09.2004թ. № 38 որոշմամբ հավանության է արժանացել «Անտառի ազգային քաղաքականության և ռազմավարության հայեցակարգը».
 - ՀՀ կառավարության 21.07.2005թ. № 1232-Ն որոշմամբ հավանության է արժանացել «Անտառի ազգային ծրագիրը».
 - ՀՀ Բնապահպանության նախարարի 10.08.2004թ. № 226-Ա Հրամանով հավանության է արժանացել «Կենսաբազմազանության պահպանության և բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ տեղեկատվության տարածման գործընթացի զարգացման ուղիները».
 - 2005-2006 թթ. մշակվել է «Ջրի ազգային ծրագիրը» և ներկայումս այն քննարկվում է շահագրգիռ կողմերի շրջանակներում.
 - Ավարտվել է «Տեղեկատվության և մոնիտորինգի համակարգի օպտիմալացման նպատակով ինստիտուցիոնալ և իրավական ներուժի զարգացում Հայաստանում՝ գլոբալ բնապահպանական կառավարման համար» ծրագրի PDF A փուլը և ԳԷՖ-ի ազգային համակարգող գրություն է հղել ԳԷՖ-ին ֆինանսական օժանդակություն ստանալու՝ միջին չափի ծրագրի իրագործման համար:
6. **Գյուղատնտեսության ոլորտում** մշակվել և/կամ գործողության մեջ են ռազմավարական նշանակության հետևյալ ծրագրերը.
 - 2002թ. ՀՀ կառավարության № 1115-Ն որոշմամբ ընդունվել է «ՀՀ 2002-2005թթ. գյուղատնտեսական մեխորացիայի զարգացման միջոցառումների ծրագիրը».
 - 2002թ. ՀՀ կառավարությունը արձանագրային որոշմամբ ընդունել է «Տոհմաբուծության զարգացումը Հայաստանում» հայեցակարգը.
 - ՀՀ կառավարության 14.04.2004 թ. № 682-Ն որոշմամբ ընդունվել է «ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությունը».
 - 2005թ. ՀՀ կառավարությունը հաստատել է «ՀՀ պարենային քաղաքականության ապահովումը» ծրագիրը:

2002-2006թթ. ԳԱԾ-ի դրույթներին համապատասխան անապատացման դեմ պայքարին նպաստող ինստիտուցիոնալ բնույթի բարեփոխումներ են կատարվել ջրային, հողային և անտառային ռեսուրսների պահպանության և օգտագործման, ինչպես նաև պահպանվող տարածքների կառավարման բնագավառներում: ՀՀ կառավարության 28.11.2002թ. № 1372-Ն որոշմամբ ՀՀ բնապահպանության նախարարության կազմում ստեղծվել է հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն: «Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի» շրջանակներում, իրականացվել են ենթակառուցվածքների հզորացմանն ու նյութատեխնիկական բազայի հարստացմանն ուղղված գործողություններ:

2002-2006թթ. Հայաստանում զգալի աշխատանքներ են տարվել շրջակա միջավայրի պահպանության և տնտեսության զարգացման ոլորտներում հասարակական հարաբերությունները կարգավորող օրենսդրության կատարելագործման ուղղությամբ, որոնք համահունչ են ԳԱԾ-ի ռազմավարությանը և կարող են նպաստել անապատացման դեմ արդյունավետ պայքարի իրականացմանը: Նշված ժամանակահատվածում ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են 13 օրենսգրքեր և օրենքներ, որոնք վերաբերվում են Սևանա լճին, հողերի, ջրերի, անտառների, թափոնների, ընդերքի կառավարմանը, ինչպես նաև պարենային անվտանգությանը, սեյսմիկ պաշտպանությանը, բնապահպանական պետական վերահսկողությանը և այլն: Անապատացման դեմ պայքարի հիմնախնդիրների լուծմանն անմիջականորեն առնչվում են նաև ՀՀ կառավարության կողմից ընդունված 18 ենթաօրենսդրական ակտերը, որոնք վերաբերվում են հողի բերրի շերտի օգտագործմանը, հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներին, բնության հատուկ պահպանվող տարածքներին, անտառային տարածքների բարելավմանը, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և այլն:

Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրի իրականացման հիմնական սկզբունքներից է ապահովել շահագրգիռ կողմերի մասնակցությունը: Այդ տեսակետից առանձնապես կարևորվում են ԳԱԾ-ի շրջանակներում մշակված չորս առաջնահերթ պիլոտային ծրագրերի իրականացումը: 2003-2005թթ. իրականացվեցին երկու առաջնահերթ պիլոտային ծրագրեր, որոնք ֆինանսավորվեցին ՀՀ բնապահպանության նախարարության և ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...» Կոնվենցիայի Քարտուղարության միջև կայացած բանակցությունների արդյունքում: 2002թ. ՀՀ հասարակական և գիտական հատվածների կողմից մշակվեց «Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման հայեցակարգը»: REC Caucasus ծրագրի շրջանակներում ք.Արարատի համար մշակվել է «Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների տեղական պլան»: 2002-2004թթ. ՀՀ-ները ակտիվ մասնակցել են «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» մշակմանն ու քննարկմանը և ներկայումս մասնակցում են դրա իրականացման գործընթացին: 2004թ.-ից ՀՀ Վարչապետի ղեկավարությամբ գործում է «ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամը», իսկ 2005թ.-ից՝ «Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման դիտանցը և գնահատումը իրականացնող միջգերատեսչական աշխատանքային խումբը», որոնց կազմում ընդգրկված են մի շարք հասարակական կազմակերպություններ: 2006թ. ՀՀ հայրենակցական միությունները կազմակերպեցին «Միասնական ծառատունկ» հանրապետության ամբողջ տարածքում, որին ակտիվորեն մասնակցեցին հասարակության բոլոր խավերը: Երևան քաղաքի կանաչ տարածքների և ջրային մակերեսների պահպանության նպատակով 2002թ. սկզբին մի քանի ՀՀ-ներ ստեղծեցին «Ի պաշտպանություն Երևանի կանաչ տարածքների» դաշինք, որը ներկայումս միավորում է 39 հասարակական կազմակերպություն: ԳԱԾ-ի արդյունավետ իրականացմանը մասնակցային գործընթացի ապահովման կարևոր նախապայմաններից է հիմնախնդիրների վերաբերյալ ազգաբնակչության իրազեկության բարձրացման և շահագրգիռ կողմերի ուսուցման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները: 2002-2006թթ. այս ուղղություններով Հայաստանում արձանագրվել են բազմաթիվ միջոցառումներ՝ ԵԱՀԿ աջակցությամբ Բնապահպանության նախարարությունում ստեղծվեց Օրիուս-կենտրոն և 4 Օրիուս-կենտրոններ Հայաստանի տարբեր շրջաններում, տպագրվել և ազգաբնակչությանը անվճար տրամադրվել են տեղեկատվական նյութեր, նկարահանվել են մի շարք տեսաֆիլմեր, բավական ակտիվ գործել են նաև զանգվածային լրատվության միջոցները:

Հայաստանում ԳԱԾ-ն իրականացնելու համար կարևոր է դոնոր պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությունը: Այդ կապակցությամբ վարվում են համապատասխան բանակցություններ ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...» Կոնվենցիայի Քարտուղարության և «Գլոբալ Մեխանիզմի» հետ՝ նպատակ ունենալով զարգացնել միջազգային համագործակցությունը: Նախատեսվում է Հայաստանում կազմակերպել «Կլոր սեղան» ներգրավելով պոտենցիալ դոնորներին և բոլոր շահագրգիռ կողմերին: 2003թ. մայիսին Կիևում կայացած Շրջակա միջավայրի նախարարների 5-րդ համաժողովական համաժողովի ընթացքում նախարարների կողմից հավանության է արժանացել Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի /ԱԵԿԿ/ երկրների համար Բնապահպանական ռազմավարությունը: 2004թ. հոկտեմբերին Թբիլիսիում կայացած նախարարական համաժողովին քննարկվել է ռազմավարության իրագործման ընթացքը: 2004 թ-ից ԳԷՖ-ը հանդես է գալիս «Ազգային երկխոսություն» նոր նախաձեռնությամբ, որով նախատեսվել է նաև Հայաստանի մասնակցությունը: ԳԷՖ-ի հետ Հայաստանի Հանրապետության Ազգային երկխոսության աշխատաժողովը կայացել է 2004թ. հոկտեմբերի 14-15-ը Երևանում: Կազմվել է ԳԷՖ-ի ազգային երկխոսության աշխատաժողովի Որոշում, որտեղ ամրագրվել են հետագա համագործակցության ոլորտները, կայացած սեմինարի արդյունքները և աջակցության ձևերը: 2005թ. սեպտեմբերից ՀՀ-ն, հանդիսանալով Ասիական Չարգացման Բանկի (ԱՉԲ) 64-րդ անդամը, գործունեություն է ծավալել երկրի ռազմավարական ուղղությունների զարգացման շուրջ Բանկի աջակցությունը ստանալու հարցում: 2005թ. քննարկվել են մշակվող «Տնտեսական Ձեկույցի և գործունեության միջնաժամկետ ռազմավարության» (ՏՁԳՄՈ) ուղղությունները, բացահայտվել են

բնապահպանական առկա մարտահրավերները և ֆինանսավորման կարիք ունեցող ոլորտները: 2006թ. մարտին ՄԱԿ-ի ԶԾ հայաստանյան գրասենյակի և ՀՀ բնապահպանության նախարարության միջև ստորագրվել է 2006թ. Տարեկան Աշխատանքային Պլանը իր 2 բաղադրիչներով՝ «Էներգիայի արդյունավետ օգտագործում» և «Բնական ռեսուրսների պահպանությունը և կայուն կառավարում», որի շրջանակներում նախատեսվում է 2006-2007թթ. իրագործել ՇՄԱԳԾ արդիականացնելու նպատակով ծրագրային գործընթաց:

2002-2006թթ. մշակվել են մի շարք տեխնիկական ծրագրեր և գործառնական նախագծեր, որոնց իրականացումը զգալիորեն կնպաստի անապատացման դեմ արդյունավետ պայքարին: Դրանցից են.

1. «Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագիրը», որն իրականացման փուլում է.
2. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին 2001-2005թթ. ժամանակահատվածում մշակվել են քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր, որոնք նպատակաուղղված լինելով տարածական պլանավորման կանոնակարգմանը, միաժամանակ ներառում են բնապահպանական, ինչպես նաև կայուն հողօգտագործման ռազմավարության խնդիրներ.
3. ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական Կոմիտեի տնտեսած միջոցների հաշվին, որպես աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին, փորձնական ծրագրի շրջանակներում մշակվել են ՀՀ Արարատի մարզի 20 համայնքների հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներ.
4. Մշակվել և ՀՀ Կառավարության հավանությանն են արժանացել Գյումրի քաղաքի գլխավոր հատակագիծը և Շիրակի մարզի տարածքային հատակագծման ուրվագիծը.
5. 2004թ. մշակվել են Արարատի, Արտաշատի, Արզնի, Ջերմուկ, Հանքավան, Արզական, Գորիս, Մարտունի, Վարդենիս, Նյուվադի, Ագարակ համայնքների գլխավոր հատակագծերը, որոնք գտնվում են համաձայնեցման և հաստատման փուլերում.
6. 2005թ. մշակվել են Թալին, Վեդի, Էջմիածին, Գավառ, Ստեփանավան, Չարենցավան, Արթիկ, Կապան, Եղեգնաձոր, Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ համայնքների գլխավոր հատակագծերը: Միաժամանակ տեղական բյուջեի միջոցներով մշակվում է Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագիծը:

2002-2006թթ. իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք համահունչ են ԳԱԾ-ին:

1. 2002թ. դեկտեմբերի 27-ից մեկնարկել է «Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագիրը», որը կավարտվի 2008 թվականին.
2. ՀՀ կառավարության կողմից 2001թ.-ին ընդունված «Շրջակա միջավայրի հիգիենայի բնագավառում գործողությունների ազգային ծրագրի» շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ուժեղացվել է պետական վերահսկողությունը բույսերի պաշտպանության նպատակով օգտագործվող քիմիական նյութերի նկատմամբ, տարվում են աշխատանքներ թունավոր թափոնների հավաքման, տեղափոխման, վերամշակման, վնասագերծման ու ոչնչացման կանոնակարգման ուղղությամբ.
3. 2002-2004թթ. հանրապետությունում իրականացվել են կոլեկտորադրենաժային համակարգի վերազինման և մաքրման աշխատանքներ, մասնավորապես՝ վերականգնվել է 30 կմ դրենաժային համակարգ, որի արդյունքում յուրաքանչյուր տարի 8,0-9,0 հա տարածքներում հնարավոր է եղել վերացնել ջրածածկումը և կազմակերպել կայուն երկրագործության անցկացում.
4. Շարունակվում է իրականացվել «Իրիգացիոն համակարգի վերականգնում» ծրագիրը, որի արդյունքում վերականգնվել է 260 կմ ջրագիծ և միջտնտեսային ջրանցքներ, չորս պոմպակայաններ, չորս ջրավազաններ, վերականգնվել և կառուցվել են 238 խորքային հորեր, մաքրվել և անցկացվել է գործող 310 կմ դրենաժային ցանց.
5. 2003-2004թթ. ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի և ՀՀ բնապահպանության նախարարության համատեղ նախաձեռնությամբ ու ԳԷՖ-ի ֆինանսական աջակցությամբ Հայաստանում իրականացվել է «Հայաստանի ազգային հզորությունների ինքնագնահատում գլոբալ բնապահպանական կառավարման համար» ՄԱԶԾ/ԳԷՖ ծրագիրը: Այն կոչված էր բացահայտել երկրի ներուժի կարիքները ՄԱԿ-ի երեք գլոբալ բնապահպանական կոնվենցիաների՝ «Կենսաբազմազանության մասին», «Կլիմայի փոփոխության մասին» և «Անապատացման դեմ պայքարի...» իրականացման տեսանկյունից:

ՀՀ-ում հստակ գործող Երաշտի վաղօրոք զգուշացման համակարգը բացակայում է: Սակայն մի շարք կազմակերպությունների կողմից որոշակի աշխատանքներ են իրականացվում այդ համակարգի ստեղծման/իրագործման ուղղությամբ: Այսպես, Եվրոպական Հանձնաժողովի և ՄԱԿ-ի Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպության «Պարենային ապահովության գործողության համար տեղեկատվություն» ծրագրի շրջանակներում աշխատանքներ են տարվում նախագուշացման համակարգի ուժեղացման ուղղությամբ: Հայպետհիդրոմետը 2003թ.-ից համագործակցում է ԱՊՀ Միջպետական Հիդրոօդերևութաբանության Խորհրդի Երաշտի Մոնիտորինգի Կենտրոնի հետ: Այդ համագործակցությունը հնարավորություն է ընձեռնում թողարկել Երաշտի նախագուշացման մոնիտորինգի տասնօրյակային

տեղեկագիր, ինչպես նաև մասնակցել երաշտի, երաշտային երևույթների ագրոկլիմայական բնութագրերի ֆոնդի ստեղծման աշխատանքներին:

Հայաստանում տարածաշրջանային համագործակցության հիմնական ուղղություններն են՝ օրենսդրության ներդաշնակեցումը, կոնվենցիաների իրագործման, ինչպես նաև միջազգային գործընթացներին լիարժեք մասնակցության համար միասնական մոտեցումների կիրառումը, բնապահպանական կառավարման համընդհանուր մոդելների ստեղծումը և այլն: Առանձնակի տեղ են զբաղեցնում անդրսահմանային հիմնախնդիրները: 2002թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է Անդրսահմանային ջրային ռեսուրսների ՀՀ հանձնախումբը: Այն, սահմանակից երկրների համապատասխան հանձնախմբերի հետ համատեղ, իրականացնում է անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության օպերատիվ խնդիրներ: Հայաստանը ընդգրկվել է ՄԱԿ-ի ՁԾ, ՄԱԿ-ի ՇՄԾ և ԵԱՀԿ «Շրջակա միջավայր և անվտանգություն» տարածաշրջանային նախաձեռնության շրջանակներում առաջարկվող «Ռիսկի ձևափոխությունը համագործակցության» ծրագրի իրականացման գործընթացին: Նախաձեռնության շրջանակներում գործընթացը երկրում վարելու համար նշանակվել են ազգային համակարգողներ ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից: ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...» կոնվենցիայի քարտուղարություն ներկայացվել է առաջարկություն «Զիկատար» անտառային ուսումնական տարածաշրջանային կենտրոնի հիմնման մասին: «Զիկատար» անտառային կենտրոնը նախատեսվում է օգտագործել անապատացման դեմ պայքարի կոնվենցիայի կենտրոնական և Արևելյան երկրների համար որպես ուսումնական տարածաշրջանային կենտրոն:

Անապատացման դեմ պայքարի 2002-2005 թթ., ինչպես նաև 2006թ. միջոցառումների իրականացման ուղղությամբ համապատասխան ծախսեր են նախատեսված, ինչպես ՀՀ պետական բյուջեով, այնպես էլ դոնոր կազմակերպություններից: Բացի այդ, ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից կատարվել են լրացուցիչ ծախսեր՝ հիմնականում ուղղված չնախատեսված և օպերատիվ միջամտություն պահանջող միջոցառումների համար՝ տարերային աղետների (հեղեղումներ, ջրածածկում, ավաճեցումներ, տարածքների փլուզումներ, առատ ձյուն, ուժեղ քամիներ, կարկուտ, երաշտ, գետերի, ջրանցքների, ոռոգման և կոլեկտորադրենաժային համակարգի խցանումներ, սողանքներ) հետևանքների վերացման նպատակով: Ներկայումս հանրապետությունում իրականացվում է մոտ 36 գիտական հետազոտությունների ՀՀ պետական բյուջեից պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը՝ «Անապատացման դեմ պայքարի...» կոնվենցիայի շրջանակներում: Իրականացվում են մի շարք վարկային և դրամաշնորհային ծրագրեր, որոնցից են՝ «Ոռոգման համակարգի զարգացման ծրագիրը» - 24,8 մլն ԱՄՆ դոլար, «Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման Ծրագիրը» - 16 մլն. ԱՄՆ դոլար, «Պատվարների անվտանգության ծրագիրը» - 26,6 մլն. ԱՄՆ դոլար, «Հազարամյակի մարտահրավեր» ծրագիրը - 235,6 մլն. ԱՄՆ դոլար և այլն:

Շրջակա միջավայրի, այդ թվում անապատացման գործընթացների դիտարկման և ուսումնասիրության, տեղեկատվության հավաքի, վերլուծության և փոխանակման համակարգման համար, որպես մեխանիզմ նշակվել է էկոլոգիական չափանիշների ցանկ, որը ներկայացվել է ՀՀ կառավարության հաստատմանը: Չափանիշների ընտրության ժամանակ հաշվի են առնվել ԱԵԿԿԵ երկրների համար էկոլոգիական չափանիշները, ինչպես նաև ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...» կոնվենցիայի Գիտության և տեխնիկայի կոմիտեի առաջարկած չափանիշները:

ԲԱԶԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Կոորդինացման կենտրոնի գործառույթը իրականացնող կազմակերպություն

Կոորդինացման կենտրոնի անվանումը	ՀՀ բնապահպանության նախարարություն
Հասցե, ներառյալ էլեկտրոնային փոստի հասցեն	Հայաստանի Հանրապետություն, Երևան, 375010, Կառավարական 3-րդ մասնաշենք, 5-րդ հարկ e-mail: interdpt@rambler.ru fax: (374-10)-58-53-49 Հեռ. (+374-10) 521099
Համապատասխան երկրին վերաբերող անապատցման հարցերի կայքեր,	www.mnpiacnam www.nature-ic.com www.mnp.am – մշակվում է

2. Գործողությունների ազգային ծրագրի իրավիճակ

Հաստատման ժամկետը	ՀՀ կառավարության 28.03.2002թ. № 13 արձանագրային որոշում
Գործողությունների ազգային ծրագրի մշակում	1999-2001թթ.
Չքավորության նվազեցման ռազմավարությունում գործողությունների ազգային ծրագիրը հաշվի է առնվել	Այո 2003թ.
Ազգային զարգացման ռազմավարությունում գործողությունների ազգային ծրագիրը հաշվի է առնվել	Ոչ (ներկայումս ընդունված չկա)
ԳԱԾ-ի իրականացումը սկսվել է համագործակցության համաձայնագրի առկայության կամ բացակայության դեպքում	Ոչ (սկսվել է առանց համագործակցության համաձայնագրի առկայության)

3. ԵՏԳԾ/ՏԳԾ մշակված չկան:

4. Կոորդինացման հանձնաժողովի կազմը

	Կազմակերպության անվանումը	ԿԿ (+)	ՀԿ	Ա/Ի
	ՀՀ բնապահպանության նախարարությանն առընթեր անապատացման դեմ պայքարի կոորդինացման հանձնաժողով	+	---	12/9
1.	ՀՀ բնապահպանության նախարարություն, նախարարի առաջին տեղակալ, հանձնաժողովի նախագահ	+		Ա
2.	ՀՀ բնապահպանության նախարարություն, կոնվենցիայի պատասխանատու կատարող, հանձնաժողովի նախագահի տեղակալ	+		Ա
3.	ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմ	+		Ի
4.	ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմ	+		Ա
5.	ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ	+		Ա
6.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ	+		Ա
7.	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմ	+		Ի
8.	ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության աշխատակազմ	+		Ա
9.	ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմ	+		Ի
10.	ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչություն	+		Ի
11.	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ	+		Ա
12.	ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի բուսաբանության ինստիտուտ	+		Ի
13.	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ	+		5Ա/4Ի

ՀՀ կառավարության 1998թ. 07.10.1998 թ. № 620 որոշմամբ ստեղծվել է ՀՀ բնապահպանության նախարարությանն առընթեր անապատացման դեմ պայքարի կոորդինացման հանձնաժողով: ՀՀ կառավարության 02.12.2004թ. № 1840-Ն որոշմամբ ՀՀ բնապահպանության նախարարությանն առընթեր անապատացման դեմ պայքարի կոորդինացման հանձնաժողովը վերակազմավորվել է: Անապատացման դեմ պայքարի կոորդինացման հանձնաժողովը ընդգրկում է 12 նախարարությունների և այլ գերատեսչությունների ներկայացուցիչներ՝ ընդհանուր թիվը 21 անդամ:

5. Ոչ կառավարկան կազմակերպությունների ընդհանուր թիվը՝ 11

Ոչ կառավարկան կազմակերպությունների կողմից հիմնվել է անապատացման դեմ պայքարի կորորդինացման կոմիտե:	Ընդգրկված են քաղաքացիական հասարակության կազմակերպություններ	39
---	---	----

6. Ընդունված իրավական ակտերի և օրենքների ընդհանուր թիվը, որոնք առնչվում են Կոնվենցիայի հետ

1. ՀՀ օրենսգրքեր – 3
2. ՀՀ օրենքներ – 10
3. ՀՀ կառավարության որոշումներ -26
4. ՀՀ վարչապետի որոշումներ -3

Ընդամենը՝ 42 իրավական ակտեր:

Հինգ առաջնային օրենքներ և / կամ նորմատիվ ակտեր

Իրավական ակտերի անվանումը		Ընդունման ժամկետը
1.	Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգիրք	02.05.2001թ.
2.	Հայաստանի Հանրապետության Անտառային օրենսգիրք	24.10.2005թ.
3.	Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք	11.04.2005թ.
4.	«Հայաստանում անապատացման դեմ պայքարի Գործողությունների ազգային ծրագիր»՝ հավանության է արժանացել ՀՀ կառավարության № 13 արձանագրային որոշմամբ	28.03.2002թ.
5.	«Մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող ՀՀ պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում	02.12.2004թ.

7. Խորհրդատվական գործընթացը

Համագործակցության համաձայնագրի թիվը, որոնք կնքվել և/կամ նախաձեռնվել են Կոնվենցիայի շրջանակներում

N	Համագործակցության պաշտոնական անվանումը	Դոնորներ, միջազգային կազմակերպություններ և/կամ ՄԱԿ-ի կառույցի համակարգի մասնակիցներ	Համաձայնագրի կնքման կամ նախատեսվող ժամկետը
1	«Մտադրությունների մասին արձանագրություն» բնապահպանության նախարարի և UNCCD գործադիր քարտուղարի միջև, որի հիման վրա իրականացվել են ԳԱԾ-ի շրջանակներում մշակված երկու առաջնահերթ ծրագրեր	UNCCD Քարտուղարություն և ՄՁԾ հայաստանյան գրասենյակ	2003թ.
2	ԳԱԾ-ի իրականացմանը աջակցելու նպատակով ազգային ֆորումի կազմակերպումը Հայաստանում	Գլոբալ Մեխանիզմ և UNCCD Քարտուղարություն	2004թ.

Խորհրդատվական խորհրդակցությունների ցանկ Կոնվենցիայի իրականացման հարցերի վերաբերյալ

Խորհրդատվական խորհրդակցությունների անվանումը	Ժամկետը/ տարեթիվը	Մասնակից երկրներ-դոնորներ	Միջազգային կազմակերպությունների կամ ՄԱԿ-ի կառույցի համակարգի մասնակիցներ
Հայաստանում ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայի իրականացման հարցեր	2003թ հունվար	-----	UNCCD Քարտուղարություն
ԳԱԾ-ի իրականացման հետ կապված ազգային ֆորումի կազմակերպման հնարավորությունների գնահատում	2004թ. դեկտեմբեր	-----	UNCCD Քարտուղարություն

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տարվում են բանակցություններ Գլոբալ Մեխանիզմի, UNCCD քարտուղարության հետ ԳԱԾ-ի իրականացումը ուժեղացնելու նպատակով հնարավորություն ընձեռել կազմակերպել Հայաստանում «Կլոր սեղան»՝ ներգրավելով պոտենցիալ դոնորներին և շահագրգիռ կողմերին:

8. Թվարկեք ներկայումս մինչև 11 իրականացվող նախագծեր, որոնք ուղղակի կամ անուղակի կապված են Կոնվենցիայի հետ

Նախագծի անվանումը	Նախագիծը իրականացվում է ՊԱԾ-ի/ՏԳԾ/ԵՏԳԾ շրջանակներում (այո/ոչ)	Նախագիծը իրականացվում էշրջանակներում	Իրականացման ժամկետները	Համագործակցող մասակիցներ	Ընդհանուր բյուջեն /ԱՄՆ դոլար/
1. Կոտայքի մարզի Գառնի համայնքի անապատացման ենթարկված հողատարածքների վերականգնում	Այո	-----	2003-2006	UNCCD, UNDP	42 500
2. ՀՀ Տավուշի մարզի Մակարավանք հուշահամալիրի տեղամասի ինժեներատեխնիկական հետազոտական աշխատանքներ	Այո	-----	2003-2006	UNCCD, UNDP	31 200
3. «Լքված հանքավայրերի պաշարների ուսումնասիրություն և հաշվառում» ՀՀ Տավուշի մարզում	Այո	ՀՀ պետ. բյուջե	2005	-----	3 000
4. «Լքված հանքավայրերի պաշարների գույքագրում» ՀՀ Կոտայքի մարզում	Այո	ՀՀ պետ. բյուջե	2004	-----	3 000
5. «Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման» վարկային ծրագիր	Ոչ	NEAP UN CBD UN CCC UN CCD	2002 -2008	WB, SIDA, GEF, ՀՀ կառավարություն	16 000 000
6. Հայաստան. քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարելավում	Ոչ	UN CCC	2005-2009	GEF/UNDP	2.950.000
7. Ոռոգելի տարածքների ընդլայնում, ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացում	Ոչ	Հազարամյակի մարտահրավեր	2006-2011	ԱՄՆ	235.600 000
8. Քիմիական նյութերի և թափոնների Էկոլոգիապես հիմնավորված կառավարման համապարփակ ազգային ծրագրի մշակում և վարում	Ոչ		2004- 2006	UNITAR/IOMC	60.000
9. ՀՀ-ում Օզոնային շերտը քայքայող նյութերի փոխարինման և սառնարանային տեխնիկայի կառավարման ծրագիր, իր 6 ենթածրագրերով	Ոչ	Մոնրեալ ան արձանագրություն	2005-2008	GEF, UNDP UNEP, ՀՀ կառավարություն	2 080 000
10. Գյուղատնտեսական հողերի խոշորացման /կոնսոլիդացիայի/ փորձնական ծրագիր	Ոչ		2004-2006	FAO	40 000
11. Հայաստանի ազգային հզորությունների իֆքնագնահատում գլոբալ բնապահ-պանական կառավարման համար	Ոչ	UN CBD UN CCC UN CCD	2003-2004	UNDP/GEF	250 000

ԳԼՈՒԽ 1

ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳԵՐԱՎԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՍԱՐՄԱՆՎԱԾ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԵՎ/ԿԱՍ ՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

1.1. Ազգային ռազմավարություններ և պլաններ

ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...» Կոնվենցիայի Քարտուղարությանը Երկրորդ Ազգային Ձեկույցի ներկայացումից հետո ընկած ժամանակահատվածում Հայաստանում մշակվել և իրականացվում են մի շարք ռազմավարական ազգային ծրագրեր, որոնք առնչվում են անապատացման դեմ պայքարի հիմնախնդրին և ունեն առաջնային նշանակություն:

1. 17.06.2003թ. ընդունվել է **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003-2007թթ. գործունեության ծրագիրը»**: Ծրագրում որպես գյուղատնտեսության ոլորտի գերակա ուղղություններ համարվում են՝ ոռոգման համակարգերի վերականգնումը, կոլեկտորացման քարտեզային համակարգերի անխափան ու անվթար շահագործումը, հետտնտեսային ցանցերում ջրախնայողական արդիական տեխնոլոգիաների ներդրումը, հողերի բարելավման և հակահեղեղային համալիր միջոցառումների իրականացումը:
Բնապահպանության ոլորտում գերակա խնդիրներ են համարվում բնական պաշարների վերականգնելիությանն ուղղված միջոցառումները (Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման, անապատացման դեմ պայքարի, շրջակա միջավայրի պահպանության ազգային գործողությունները): Հետևողական գործողություններ են նախատեսված պուրակների, այգիների, զբոսայգիների և այլ կանաչ տարածքների պահպանման ուղղությամբ: Բնագավառի բարեփոխումների հիմնական ուղղությունները կլինեն բնությանը պատճառված վնասի փոխհատուցման համակարգերի զարգացումն ու կատարելագործումը, հանրապետությունում էռոզիոն գործընթացների աճի դադարեցմանը, հակասողանքային գործընթացների նվազեցմանն ու հողերի վերականգնմանն ուղղված ծրագրերի մշակումը, անտառապատման և անտառվերականգնման ծավալների զգալի աճի ապահովումը, բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության ուժեղացումը, միջազգային կոնվենցիաներով Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման ապահովումը:
2. ՀՀ կառավարության 08.08.2003 թ. № 994-Ն որոշմամբ հաստատվել է **«Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը»**, որով ամրագրվել են նաև շրջակա միջավայրին առնչվող հետևյալ խնդիրները.
 - անտառային ռեսուրսների արդյունավետ կառավարումը,
 - հողերի դեգրադացիայի կանխումը, անապատացմանը նպաստող մարդածին գործոնների նվազեցումը,
 - ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, օգտագործումը և Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնումը,
 - կենցաղային աղբի հեռացումը և արդյունաբերական վնասակար թափոնների խնդրի լուծումը:
3. ՀՀ կառավարության 06.11.2003թ. № 1522-Ն որոշմամբ հաստատվել է **«Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը»**, որով բնապահպանության ոլորտում 2004-2006թթ. նախատեսվում են՝
 - մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի պահպանության, դրանց բանական և արդյունավետ օգտագործման բարելավում,
 - բնապահպանական տեսչական վերահսկողություն, անտառների և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանությունն իրականացնող մարմինների գործունեության արդյունավետության բարելավում և կադրային ներուժի հզորացում:
4. **Բնապահպանության ոլորտում** մշակվել և/կամ գործողության մեջ են ռազմավարական նշանակության հետևյալ ծրագրերը.
 - ՀՀ կառավարության 02.12.2004թ. № 1840-Ն և 16.03.2005 թ. № 880-Ն որոշումներով հաստատվել են բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող Հայաստանի պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկերը, այդ թվում՝ ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...» Կոնվենցիայից բխող 2005-2010թթ., ինչպես նաև «Կենսաբազմազանության մասին», «Կլիմայի

փոփոխության մասին» և «Անապատացման դեմ պայքարի...» Կոնվենցիաներից բխող խաչածնավոր խնդիրների իրականացման միջոցառումների ցանկերը.

- 2003թ. ավարտվել է «Գիլի լճի վերականգնման» ծրագրի մշակումը, որն ուղղված է ջրածահճային տարածքների կենսաբազմազանության և էկոհամակարգի էկոլոգիական հավասարակշռության վերականգնմանը: Ստորագրվել է Հուլիսի 33 բնապահպանության նախարարության, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և ՄԱԿ-ի Ջարգացման Ծրագրի միջև: Նախագիծն իրականացնելու նպատակով պատրաստվել է նախագծային փաստաթուղթ՝ ԳԷՖ-ին ներկայացնելու համար.
- ՀՀ կառավարության 26.12.2002թ. № 54 որոշմամբ հավանություն է տրվել «Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարության և գործողությունների ազգային ծրագրին», որի նպատակն է բնության հատուկ պահպանվող տարածքների կատարելագործված համակարգի ստեղծման միջոցով ապահովել դրանց ներդաշնակ ինտեգրացումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը և համապատասխանեցումը միջազգային համաձայնագրերին, ստանդարտներին և չափանիշներին.
- ՀՀ կառավարության 30.09.2004թ. № 38 որոշմամբ հավանության է արժանացել «Անտառի ազգային քաղաքականության և ռազմավարության հայեցակարգը», որտեղ ընդգրկված են անտառների պաշտպանության, պահպանության, անտառօգտագործման, անտառվերականգնման, ագրոանտառաբուծության և կենսաբազմազանության ռազմավարական խնդիրներն ու նպատակները, ոլորտի կրթության, գիտության, ուսուցման և տեղեկատվության ուղղությունները: Նույն որոշմամբ հավանության է արժանացել նաև «Ապօրինի անտառահատումների հետ կապված խնդիրների լուծման աջակցման միջոցառումների գործողությունների ծրագիրը».
- ՀՀ կառավարության 21.07.2005թ. № 1232-Ն որոշմամբ հավանության է արժանացել «Անտառի ազգային ծրագիրը».
- ՀՀ Բնապահպանության նախարարի 10.08.2004 թվ. № 226-Ա Հրամանով հավանության է արժանացել «Կենսաբազմազանության պահպանության և բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ տեղեկատվության տարածման գործընթացի զարգացման ուղիները».
- 2005-2006թթ. մշակվել է «Ջրի ազգային ծրագիրը» և ներկայումս այն քննարկվում է շահագրգիռ կողմերի շրջանակներում.

5. **Գյուղատնտեսության ոլորտում** մշակվել և/կամ գործողության մեջ են ռազմավարական նշանակության հետևյալ ծրագրերը.

- 2002թ. ՀՀ կառավարության № 1115-Ն որոշմամբ ընդունվել է «ՀՀ 2002-2005թթ. գյուղատնտեսական մեխորացիայի զարգացման միջոցառումների ծրագիրը».
- 2002թ. ՀՀ կառավարությունը արձանագրային որոշմամբ ընդունել է «Տոհմաբուծության զարգացումը Հայաստանում» հայեցակարգը, որն ուղղված է տոհմաբուծության կատարելագործմանը և տոհմային ֆոնդի պահպանման ու տնտեսավարող սուբյեկտների գործունեության կարգավորմանը.
- ՀՀ կառավարության 14.04.2004 թ. № 682-Ն որոշմամբ ընդունվել է «ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությունը», որի հիմնական նպատակն է բնական ռեսուրսների կայուն օգտագործման միջոցով նպաստել հանրապետության գյուղատնտեսության կայուն զարգացմանը, պարենային ապահովության մակարդակի բարձրացմանը և գյուղական բնակչության եկամուտների ավելացմանը.
- 2005թ. ՀՀ կառավարությունը հաստատել է «ՀՀ պարենային քաղաքականության ապահովումը» ծրագիրը, որում առանձնացված են շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների տնտեսական քաղաքականության առաջնությունները հանրապետության բնակչության պարենային ապահովման ոլորտում այն համապատասխանեցնելով ՀՀ գործող օրենսդրությանը:

6. **Քաղաքաշինության ոլորտի** գերակա ուղղություններից է ՀՀ տարածքում հակասողանքային և այլ առաջնահերթ միջոցառումների ծրագրի իրականացումը, որը կնպաստի վտանգավոր երկրաբանական երևույթների ազդեցության անվտանգությանը տարբեր ճյուղերում:

Վերը նշված ծրագրերը ուղղակի կամ անուղղակի ձևով համահունչ են Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրին: Անհրաժեշտության դեպքում, ռազմավարական նշանակության ծրագրերի իրականացումն ապահովելու նպատակով ստեղծվում են միջգերատեսչական հանձնաժողովներ, ներգրավվելով բոլոր շահագրգիռ կողմերին: (տես նաև Գլուխ 5-ում բերված տեղեկատվությունը):

1.2. Լոռի ցուցանիշներ, որոնք ընդգրկվել են 10/COP 5-ի որոշմանը համապատասխան

1. Անհրաժեշտ տեխնոլոգիաներ և գիտելիքներ ստանալու հնարավորության ապահովում

«Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի» շրջանակներում, իրականացվել են նյութատեխնիկական բազայի հարստացմանն ուղղված հետևյալ գործողությունները.

- 2005թ. «Հայաստան» ՊՈԱԿ–ին տրամադրվել են 50000 ԱՄՆ դոլարին համարժեք համակարգչային և գրասենյակային սարքավորումներ.
- 2003թ. «Սևան» ազգային պարկի համար գնվել են 4 արագընթաց մոտորանավակներ.
- 2004թ. «Սևան», «Դիլիջան» ազգային պարկերի և Բնապահպանական պետական տեսչության մարզային մասնաճյուղերի անձնակազմի համար ձեռք են բերվել 100 000 ԱՄՆ դոլարին համարժեք դաշտային սարքավորումներ (գիշերային և ցերեկային հեռադիտակներ, վրաններ, քնապարկեր, կողմնացույցեր, ջերմաչափեր, ջրաչափեր, էխոլոտ, ջրի մոնիտորինգի սարքավորումներ և այլն) և արտահագուստներ.
- 2005թ. ՀՀ Բնապահպանության նախարարության Շրջակա միջավայրի պահպանության վարչության, Հասարակայնության հետ կապերի բաժնի, Կենսառեսուրսների կառավարման գործակալության, Բնապահպանական պետական տեսչության, «Սևան» և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ների համար գնվել և հանձնվել են 43 500 ԱՄՆ դոլարին համարժեք համակարգչային և գրասենյակային սարքավորումներ (համակարգիչներ, տպիչներ, պատճենահանող սարքեր, սկաներներ, թվային ֆոտո և տեսախցիկներ, օդափոխիչներ, համակարգչային պրոյեկտորներ, էկրաններ, սառնարաններ, միկրոալիքային վառարաններ, հեռուստացույցեր, տեսամագնիտոֆոններ և այլն).
- ՀՀ Բնապահպանության նախարարությունում երկրատեղեկատվական համակարգի տեղադրման նպատակով 2004թ. իրականացվել է ԵՏՀ կարիքների, հնարավորությունների գնահատում, վերլուծություն և նախագծում.
- Մշակվել են «Զիկատար» անտառային ուսումնական կենտրոնի վերականգնման և 10 կմ երկարությամբ դեպի կենտրոն տանող անտառային ճանապարհի վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը.
- 2006թ. մարտին ձեռք են բերվել ՀՀ Բնապահպանության նախարարությունում ԵՏՀ տեղադրման համար անհրաժեշտ սարքավորումները (շուրջ 80 000 ԱՄՆ դոլար արժեքության): 2006 թվականի ընթացքում կիրականացվի անձնակազմի համապատասխան ուսուցում:

2. Այլ էկոլոգիական կոնվենցիաների հետ կապը և սիներգիզմը, համապատասխան դեպքերում, ազգային զարգացման ռազմավարությունների հետ

2003-2004թթ. ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և ՀՀ բնապահպանության նախարարության համատեղ նախաձեռնությամբ և ԳԷՖ-ի ֆինանսական աջակցությամբ Հայաստանում իրականացվել է «Հայաստանի ազգային հզորությունների ինքնագնահատում գլոբալ բնապահպանական կառավարման համար» ՄԱՁԾ/ԳԷՖ ծրագիրը: Այն նպատակ ուներ բացահայտել երկրի ներուժի կարիքները ՄԱԿ-ի երեք գլոբալ բնապահպանական կոնվենցիաների՝ «Կենսաբազմազանության մասին», «Կլիմայի փոփոխության մասին» և «Անապատացման դեմ պայքարի...» իրականացման տեսանկյունից: Ծրագրի հիմնական նպատակն էր մշակել ծրագրեր, որոնք ուղղված կլինեն կարիքների գնահատման ընթացքում բացահայտված առաջնահերթ և ընդհանուր խնդիրների սիներգետիկ հասցեագրման ուղիները:

Ծրագրի շրջանակներում մշակվել են.

- ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...» Կոնվենցիայի խնդիրները, որոնք խաչաձևում են մյուս երկու կոնվենցիաների հետ և թեմատիկ գնահատումների հիման վրա կազմվել է դրանց իրականացման պլանը.
- մշակվել են հանրապետությունում հողերի դեգրադացիայի դեմ ուղղված առաջնահերթ ծրագրեր, որոնք նախատեսվում են ներկայացնել Գլոբալ էկոլոգիական ֆոնդին / GEF/:

Ծրագրի շրջանակներում իրականացվել է թեմատիկ և խաչաձևվող ազգային հզորությունների գնահատում: Հայաստանը տարածաշրջանի առաջին երկրների շարքում է, որը սկսեց ազգային հզորությունների կարիքների ինքնագնահատման գործընթացը /ԱՀԳ/: Կենսաբազմազանության, կլիմայի փոփոխության և անապատացման դեմ պայքարի ոլորտներում մշակվել են թեմատիկ գնահատման զեկույցներ և հիմնական բարձրացված հարցերը վերաբերում են շրջակա միջավայրի առկա վիճակի մասին տվյալների կառավարմանը, ներառյալ տվյալների հավաքագրումը, վարումը, վերլուծությունը, տեղեկատվության փոխանակումը և հասանելիությունը:

Վերջինիս իրագործման համար հիմնվելով ԱՀԳ գործընթացի ընթացքում ստացված գնահատման արդյունքների վրա և ելնելով երեք կոնվենցիաների պահանջներից մշակվել էր «Տեղեկատվության և մոնիտորինգի համակարգի օպտիմալացման նպատակով ինստիտուցիոնալ և իրավական ներուժի

զարգացումն Ռայաստանում՝ գլոբալ բնապահպանական կառավարման համար» ծրագիրը, որի հիմնական խնդիրն է ուժեղացնել Ռայաստանի ազգային հզորությունները գլոբալ բնապահպանական կոնվենցիաներին կատարելագործված հաշվետվություններ ներկայացնելու համար՝ իրականացնելով շրջակա միջավայրի ինտեգրացված և համակարգված մոնիտորինգ, արտանետումների, արտահոսքերի և բնական ռեսուրսների օգտագործման ծավալների հաշվառում ու գույքագրում և համապատասխան հետազոտություններ՝ կառավարության, մասնավոր և գիտական սեկտորի համագործակցությամբ և գոյություն ունեցող ցանցերի և համակարգչային ծրագրերի կիրառմամբ: Իրականացվել է ծրագրի PDF A փուլը և մշակվել միջին չափսի ծրագրի նախագիծը:

«Տեղեկատվության և մոնիտորինգի համակարգի օպտիմալացման նպատակով ինստիտուցիոնալ և իրավական ներուժի զարգացումն Ռայաստանում՝ գլոբալ բնապահպանական կառավարման համար» միջին չափսի ծրագիրը հասցեագրում է ԳԷՖ-ի աշխատանքային 3 ոլորտների /կենսաբազմազանություն, կլիմայի փոփոխություն և հողերի կայուն կառավարում/ և կոնկրետ համապատասխանում է հզորությունների միջոլորտային զարգացման ռազմավարական առաջնայնությանը (CB-2): Ծրագիրը զարգացնելու է ազգային հզորությունները բնապահպանական տեղեկատվության կառավարման ուղղությամբ, որպեսզի բարելավվի կոնվենցիաներին զեկուցելու գործընթացը և ապահովվի կայուն ազգային զարգացում առավել արդյունավետ բնապահպանական քաղաքականության մշակմանը նպաստող մոնիտորինգի և տեղեկատվության կառավարման բարելավման միջոցով:

ԳԼՈՒԽ 2

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԻՋՈՑՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌՎԵԼ ԵՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

2.1. Գործողությունների ազգային ծրագիրը որպես տնտեսական և սոցիալական զարգացման ազգային պլանի բաղադրիչ

ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...» կոնվենցիայով Ռայաստանի Յանրապետությունը ստանձնել է մի շարք միջազգային պարտավորություններ, որտեղ առաջնային տեղ է զբաղեցնում Ռայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրի /ԳԱԾ/ մշակումը և իրականացումը: Դրա ռազմավարական կարևորության ապացույցն է ԳՅ կառավարության կողմից ԳԱԾ-ի հավանության արժանացումը (28.03.2002թ.), որն անշուշտ կխթանի տարբեր ոլորտներում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմանը: Այն ղեկավար փաստաթուղթ է, որտեղ տրված են անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրի ռազմավարական գերակայող ուղղությունները:

Գործողությունների ազգային ծրագիրը հնարավորություն կտա պետությանը առավել արդյունավետ նպատակաուղղել միջոցները հանրապետությունում և տարածաշրջանում բնապահպանական քաղաքականության, որպես ազգային անվտանգության խնդիր, իրականացման և անապատացման սոցիալ-տնտեսական հետևանքների մեղմացման ու կանխարգելման համար: Այն նախատեսում է նախարարությունների, պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, գիտական, ուսումնական և այլ կազմակերպությունների անհրաժեշտ խնդիրների ու գործողությունների շրջանակը:

Գործողությունների ազգային ծրագիրը նախատեսվում է իրականացնել առավել որոշակի և հստակ ժամկետներում հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման տարեկան և հեռանկարային ծրագրերի շրջանակներում՝ ըստ ոլորտների, ֆինանսավորման չափերի ու աղբյուրների: Այն իր արտացոլումն է գտնելու, ըստ հնարավորության, ԳՅ տարեկան պետական բյուջեում, համապատասխան համայնքների բյուջեներում, ինչպես նաև դոնոր պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերում: Սակայն ծրագրում բերված ռազմավարական նշանակության խնդիրները իրականացնելու համար անհրաժեշտ է որոշել դրանց պատասխանատու կատարողներին և համակատարողներին, հաշվարկել և գնահատել աշխատանքները ըստ ժամանակացույցի, որն իրատեսական է մշակել և ընդգրկել «կարիքների գնահատում հողերի կայուն կառավարման համար» ծրագրի շրջանակներում:

ԳՅ կառավարության 02.12.2004թ. «Մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող՝ Ռայաստանի Յանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին» № 1840-Ն որոշման հավելվածի՝ IV բաժնի 1-ին կետի համաձայն հանձնարարվել էր

վերակազմավորել ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայից բխող ՀՀ պարտավորությունների կատարումն ապահովող Կոորդինացման հանձնաժողովի կազմը: Կոորդինացման հանձնաժողովը ստեղծվել էր դեռևս ՀՀ կառավարության 07.10.1998թ. № 620 որոշմամբ: ՀՀ բնապահպանության նախարարի 28.03.2005թ. № 86-Ա հրամանով հաստատվեց Կոորդինացման հանձնաժողովի կազմը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության նախարարությունների, գերատեսչությունների և բնապահպանության նախարարության աշխատակազմի ստորաբաժանումների առաջարկները (Կոորդինացման հանձնաժողովի գործունեությանն առնչվող հարցերը մանրամասն ներկայացված են առաջին ազգային զեկույցում /տես նաև բազային տվյալների կետ 4/):

ՀՀ բնապահպանության նախարարությունը հանդիսանում է Կոնվենցիայով ստանձնած պատասխանատու կատարող /ՀՀ կառավարության 02.03.1998թ. № 124 որոշում/: Այն հանդիսանում է գործադիր իշխանության հանրապետական մարմին, որը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների բանական օգտագործման բնագավառում պետական քաղաքականություն: Նախարարության աշխատակազմը իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է և ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

Երկրորդ ազգային զեկույցի ներկայացնելուց հետո շահագրգիռ կողմերի մասնակցության մակարդակը աճել է ի հաշիվ տեղեկատվության մակարդակի բարձրացման, ինչպես նաև հասարակության սոցիալ-տնտեսական վիճակի հաշվին:

Պոտենցիալի ձևավորումը տեղական և ազգային մակարդակով նպատակահարմար է հիմնել ՀՀ բնապահպանության նախարարությունում:

2.2. Անապատացման դեմ պայքարի հետևողական և արդյունավետ ինստիտուցիոնալ հիմունքները

2002-2006թթ. ԳԱԾ-ի դրույթներին համապատասխան անապատացման դեմ պայքարին նպաստող ինստիտուցիոնալ բնույթի բարեփոխումներ են կատարվել հետևյալ բնագավառներում.

1. *Ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման բնագավառ.*

- ջրային ռեսուրսների առավել արդյունավետ, նպատակաուղղված և ապակենտրոնացված կառավարումը խթանելու համար Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը բաժանվել է 5 ջրավազանային տարածքների և ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կազմում ստեղծվել են 5 ջրավազանային կառավարման տարածքային բաժիններ.
- ջրային ռեսուրսների կառավարման խնդիրների կանոնակարգման նպատակով 2002թ. փետրվարին ՀՀ բնապահպանության նախարարությունում ստեղծվել է ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն.
- ՀՀ Վարչապետի 16.09.2002 թ. № 532-Ն որոշմամբ ստեղծվել է Ջրի Ազգային խորհուրդ: Հաստատվել է խորհրդի կանոնակարգն ու կազմը՝ ՀՀ Վարչապետի նախագահությամբ, իսկ 2006 թ. փետրվարին կազմավորվել է նաև խորհրդի քարտուղարությունը: Ջրի ազգային խորհուրդը ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում բարձրագույն խորհրդատվական մարմին է, որը միջբնագավառային մասնակցության միջոցով քննարկում և առաջարկություններ է ներկայացնում ջրի ազգային քաղաքականության, ջրի ազգային ծրագրի ու բնագավառին վերաբերող այլ իրավական ակտերի վերաբերյալ: Ջրի ազգային խորհրդի կազմում ստեղծվել է Վեճերը լուծող հանձնաժողով, որը լուծում է ջրօգտագործման թույլտվություններին առնչվող հարցեր:

2. *Հողային ռեսուրսների պահպանության և օգտագործման բնագավառ.*

- ՀՀ վարչապետի 18.11.2002թ. № 666-Ա որոշմամբ հաստատվել է համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական սեփականության հողերն անհատույց սեփականության իրավունքով համայնքներին փոխանցելու համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի կազմը՝ ներգրավելով բոլոր շահագրգիռ կողմերին՝ գործընթացը ավելի սեղմ ժամկետներում իրականացնելու համար.
- ՀՀ կառավարության 14.01.2002թ. № 26 որոշմամբ սահմանվել են հողային պաշարների պետական կառավարման լիզոր մարմինները, համապատասխան իրավասություններով, մասնավորապես ՀՀ բնապահպանության նախարարությունը լիազոր մարմին ճանաչվեց հողերի պահպանության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողերի, բնապահպանական հողերի օգտագործման բնապահպանական սահմանափակումների ու նորմերի սահմանման քաղաքականության և իր իրավասության շրջանակներում հողերի պահպանության նկատմամբ պետական վերահսկողության իրականացման մասերով:

3. Անտառային ռեսուրսների պահպանության և օգտագործման բնագավառ.

- 2004թ. անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման գործառույթներն իրականացնող «Հայանտառ» պետական փակ բաժնետիրական ընկերությունը ՀՀ կառավարության որոշմամբ վերակազմավորվել է «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության և տեղափոխվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության ենթակայության՝ անտառների նկատմամբ վերահսկողության գործառույթները թողնելով ՀՀ բնապահպանության նախարարությանը.
- 2004թ. ՀՀ բնապահպանության նախարարության Պետական բնապահպանական տեսչության կազմում ստեղծվեց անտառների վերահսկողության բաժին.
- ՀՀ կառավարության 10.06.2004թ. № 891-Ն որոշմամբ ստեղծվել է «Հայաստանում անտառների զարգացման և վերականգնման հիմնադրամ»: Հիմնադրամի գործունեությունը կայանում է հանրապետության անտառների վերականգնումը և դրանց զարգացման համար լավագույն պայմանների ստեղծումը.
- ՀՀ վարչապետի 09.01.2004թ. № 4-Ն որոշմամբ ՀՀ Բնապահպանության նախարարությունում ստեղծվել է միջգերատեսչական «Ապօրինի անտառհատումների կանխարգելման աշխատանքներին աջակցող խորհուրդ» և հաստատվել է խորհրդի կանոնադրությունը.
- ՀՀ կառավարության 28.07.2005թ. № 1152-Ն որոշմամբ ստեղծվել է «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն».
- ՀՀ Տավուշի մարզի շուրջ 81 000 հա անտառային տարածքների անտառկառավարման պլանների կազմման գաղտնիության 2004-2005թթ. մշակվել են «Իջևան» և «Սևբար» անտառտնտեսությունների, ինչպես նաև «Զիկատար» անտառային ուսումնական կենտրոնի անտառկառավարման պլանները. 2006թ. մեկնարկել են «Ճամբարակ», «Արծվաբերդ», «Նոյեմբերյան», «Զիկատար» անտառտնտեսությունների անտառկառավարման պլանների կազմման աշխատանքները, որոնք կավարտվեն 2007թ.:

4. Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման բնագավառ.

- կենսառեսուրսների կառավարման խնդիրների կանոնակարգման նպատակով 08.08.2002թ. № 1236-Ն որոշմամբ ՀՀ բնապահպանության նախարարության կազմում ստեղծվել է կենսառեսուրսների կառավարման գործակալություն.
- ՀՀ կառավարության 2002թ. համապատասխան որոշումներով Հայաստանում գործող պետական արգելոցները և ազգային պարկերը վերակազմավորվել են որպես պետական ոչ առևտրային կազմակերպությունների, հաստատվել են դրանց և պահպանվող տարածքների կանոնադրությունները.
- 2004 թվականի հուլիսի 1-ից սկսվել է «Սևան» և «Դիլիջան» ազգային պարկերի և դրանց պահպանական գոտիների սահմանների ճշգրտման, գոտիավորման, կենսաբանական պաշարների գույքագրման և տնտեսական գնահատման, մոնիտորինգի համակարգի ներդրման, տուրիզմի համար թույլատրելի տարածքների և երթուղիների քարտեզագրման և մասնակցային կառավարման պլանների մշակման աշխատանքները: Աշխատանքները կավարտվեն 2006թ. աշնանը և մասնակցային կառավարման պլանները կներկայացվեն ՀՀ կառավարության հաստատմանը:
- 2004թ. ավարտվել են «Սևան» և «Դիլիջան» ազգային պարկերին պատկանող շենքեր-շինությունների վերանորոգման և փոքր ճարտարապետական ձևերի նախագծային աշխատանքները: 2006թ. սկսվել են շինարարական աշխատանքները, որոնք կավարտվեն 2007թ.:

5. Մոնիտորինգ

ՀՀ կառավարության 28.11.2002թ. № 1372-Ն որոշմամբ ՀՀ բնապահպանության նախարարության կազմում ստեղծվել է հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն, որի գործունեությունն ուղղված է հիդրոօդերևութաբանական երևույթների տվյալների համեմատությունը շրջակա միջավայրի մոնիտորինգի տվյալների հետ:

6. Կայուն զարգացում

ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 25-ի № 1102-Ա որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման ազգային խորհրդի կազմը: Հայաստանի Հանրապետության Ազգային գնահատման զեկույցում, որը ներկայացված էր Կայուն զարգացման համաշխարհային զագաթաժողովին (ՅՈՒՆԵՍԿՈՒՍ 2002թ.). անապատացման դեմ պայքարը ներկայացված է որպես ազգային հրատապ խնդիր:

2.3. Համաձայնեցված և ֆունկցիոնալ նորմատիվա-իրավական հիմքեր

2002-2006թթ. Հայաստանում զգալի աշխատանքներ են տարվել շրջակա միջավայրի պահպանության և տնտեսության զարգացման ոլորտներում հասարակական հարաբերությունները կարգավորող օրենսդրության կատարելագործման ուղղությամբ, որոնք համահունչ են ԳԱԾ-ի ռազմավարությանը և կարող են նպաստել անապատացման դեմ արդյունավետ պայքարի իրականացմանը:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2002-2006 թվականներին ընդունվել են մի շարք իրավական ակտեր, որոնք ուղղված են հողային օրենսդրության կատարելագործմանը:

27.11.2005 թվականին հանրաքվեով ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 48-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականությունը պետության հիմնախնդիրներից է, իսկ 33.2 հոդվածը նախատեսում է, որ պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար: Տես նաև 1.2-ի կետ 5-ը:

1. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենսգրքեր և օրենքներ.

- 2002 թվականի մայիսի 7-ին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը նախատեսում է համայնքի ղեկավարի լիազորությունները հողօգտագործման բնագավառում ինչպես նաև համայնքի ղեկավարի լիազորությունները բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում:
- Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք (04.06.2002թ.) - համանուն օրենսգիրքը 1-ին անգամ ընդունվել է 19.03.1992թ.: Օրենսգրքում առկա է համապարփակ ավազանային կառավարման գաղափարը: Այն հստակ տարանջատում է ջրային համակարգերի և ջրային ռեսուրսների պետական լիազոր մարմինների գործառույթները:
- «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք (05.06.2002թ., ՀՕ-339), որով կարգավորվում են այդ ոլորտի հարաբերությունները և սահմանվում են պետական քաղաքականության հիմնական ուղղությունները
- «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենք (05.11.2002թ.), որում խախտված հողերի վերականգնման համար նախատեսվում է հիմնել շրջակա միջավայրի պահպանության դրամագլուխ՝ հանքարդյունահանման օգտագործման իրավունք ունեցող տնտեսավարող սուբյեկտի միջոցների հաշվին.
- 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունվել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը, որով նախատեսված է նաև քրեական պատասխանատվություն շրջակա միջավայրի պահպանության կանոնները խախտելու և այլն համար:
- «Թափոնների մասին» ՀՀ օրենք (24.11.2004թ.), որը նախատեսում է թափոնների օգտահանման և դրանց գոյացման ծավալների նվազեցման ապահովմանն ուղղված կազմակերպական և տնտեսական միջոցառումներ, սահմանում է թափոնների գործածության ոլորտում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն ու ուղղությունները:
- «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (11.04.2005թ.), որի համաձայն բնապահպանական տեսչության լիազորությունները հստակեցվեցին և սահմանվեցին տեսչության գործառույթները տարբեր ոլորտներում, այդ թվում հողերի պահպանության ոլորտում.
- 2005 թվականի մայիսի 20-ին ընդունվեց «Գյուղատնտեսական հողերի մելիորացիայի մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է գյուղատնտեսական հողերի մելիորացիայի հետ կապված հարաբերությունները:
- 2002 թվականի նոյեմբերի 6-ին ընդունվեց «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգիրքը, որը նախատեսում է հողերի պահպանությանը վերաբերող դրույթներ՝ ընդերքօգտագործողը պարտավոր է օգտագործման համար պիտանի դարձնել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը:
- «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական ու բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենք (03.05.2005թ.), որը սահմանում է բնապահպանական իրավախախտումները և դրանց հետևանքով բուսական և կենդանական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագները.
- «Զրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենք (03.05.2005թ.).
- 2005 թվականի մայիսի 20-ին ընդունվեց «Սերմերի մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է սերմերի սորտերի գրանցման, սերմերի արտադրության, վերարտադրության, հավաստագրման, պահպանության, իրացման և օգտագործման հետ կապված հարաբերությունները.

- ՀՀ անտառային օրենսգիրք (24.10.2005թ.) - համանուն օրենսգիրքն 1-ին անգամ ընդունվել է 01.11.1994թ.: Այն ընդգրկում է նոր մոտեցումներ անտառների պահպանության, կառավարման, զարգացման և վերարտադրության ուղղությամբ՝ նշված գործառույթներում ոչ պետական սեկտորի ներգրավման հնարավորություններով:

Ներկայումս մշակվել և տարբեր մակարդակներում քննարկման փուլում են գտնվում «Բնապահպանական ֆոնդի մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին», «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» և «Բնապահպանական փորձաքննության մասին», «Հողերի օգտագործման և պահպանման պետական վերահսկողության իրականացման կարգի մասին» ՀՀ նոր օրենքների նախագծերը:

2. ՀՀ Կառավարության կողմից ընդունված որոշումներ.

- «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը» (19.09.2002թ. № 1622-Ն որոշում), որով կանոնակարգվում է հանրապետության տարածքում շինարարական և օգտակար հանածոների արդյունահանման ու հողերի խախտման հետ կապված այլ աշխատանքներ կատարելիս հանված հողի բերրի շերտի նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները /հանում, տեղափոխում, պահպանում և հանված հողի հաշվառում/, սահմանված են պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները.
- Հանրապետությունում ավարտին է մոտենում 2002թ. սկսված պետական սեփականության հողերի փոխանցումը համայնքներին գործընթացը /02.02.2002թ. ՀՀ կառավարության № 93 որոշում/: ԳԱԾ-ում նախատեսված է հողերի կառավարման ապակենտրոնացումը:
- «Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների մշակման և հաստատման կարգը» (02.05.2003թ. № 625-Ն որոշում), որի կիրարկման արդյունքում համայնքների վարչական սահմաններում կանոնակարգվում են հողօգտագործման ու քաղաքաշինական գործունեությանն առնչվող խնդիրները՝ ազատական տնտեսության առանձնահատկություններին համապատասխան.
- «ՀՀ-ում բնության հատուկ պահպանվող տարածքներում և անտառային ֆոնդի հողերում հողատեղացման ու քաղաքաշինական գործունեության կարգը հաստատելու մասին» (08.05.2003թ. № 613-Ն որոշում), որով հստակեցվում են քաղաքաշինական գործունեության կանոնակարգման համապատասխան ընթացակարգերը և տարբեր մարմինների իրավասությունները.
- «ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գույքահարկի և հողի հարկի եկամուտների հաշվառման ու վճարումների կազմակերպման մասին» (29.05.2003թ. № 750-Ն որոշում), որի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կատարվում է հողի հարկի եկամուտների հաշվառման և վճարումների իրականացում.
- «Հատուկ պահպանվող ջրային համակարգերն ամբողջությամբ կամ մասնակիորեն, մշտապես կամ ժամանակավորապես տնտեսական գործունեության ոլորտից դուրս բերելու և պահպանելու կարգը սահմանելու մասին» (10.07.2003թ. № 888-Ն որոշում).
- «Կեղտաջրերի և ցամաքուրդային ջրերի ընդունման համար կլանող հորատանցքերի, սպառված հանքավայրերի, հանքահորերի ու բաց հանքերի օգտագործման և արտահոսքի թույլատվության կարգը հաստատելու մասին» (10.07.2003թ. № 982-Ն որոշում).
- «Ստորերկրյա աղբյուրների պահուստավորման կարգը սահմանելու մասին» (23.07.2003թ. № 986-Ն որոշում).
- «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» (14.08.2003թ. № 1110-Ն որոշում).
- «Շրջակա միջավայրի պահպանության դրամազվի օգտագործման և հատկացումների չափի որոշման կարգը» (14.08.2003թ. № 1128-Ն որոշում), որով սահմանվում են ընդերքի շահագործման հետևանքով խախտված հողերի վերականգնմանն ուղղված ֆինանսական միջոցների մուտքագրման և դրանց օգտագործման կարգը.
- «Ջրհավաք ավազաններում և գերխոնավ տարածքներում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունների հսկողության կանոնակարգը հաստատելու մասին» (14.08.2003թ. № 1182-Ն որոշում).
- «Ջրահեռացման համակարգերի օգտագործման և հեռացվող ջրերի մաքրման կանոնները սահմանելու մասին» (28.08.2003թ. № 1228-Ն որոշում).
- ՀՀ կառավարության 13.05.2004թ. № 766-Ն որոշմամբ սահմանվել են «Սևան» ազգային պարկի 1908,0 մետր բացարձակ միջից ցածր տարածքներում հողամասերը վարձակալությամբ տրամադրելու առանձնահատկությունները.

- «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան էկոտոնի և անօտարելի տարածքների սահմանման չափորոշիչների մասին» (20.01.2005թ. № 64-Ն որոշում)։
- «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը» (25.01.2005թ. № 92-Ն որոշում)։
- «Միջազգային նշանակության հատուկ պահպանվող ջրային համակարգերի օգտագործման և պահպանության կարգը հաստատելու մասին» (15.09.2005թ. № 1628-Ն որոշում)։
- «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման հաշվետվության/հողային հաշվեկշիռի/ մասին» (22.12.2005թ. № 2243-Ն որոշում), որով ընդունվել է ի գիտություն ներկայացված հաշվեկշիռը և առաջադրվել 2006թ. ներկայացնել ՀՀ հողային հաշվեկշիռը վերջնական տեսքով
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում հողաշինարարության կազմակերպման կարգը սահմանելու մասին» № 125 որոշման համաձայն նախատեսվում են հողերի օգտագործման և պահպանության կազմակերպման հողերի մոնիտորինգին վերաբերող միջոցառումներ։

Ներկայումս մշակվել և տարբեր մակարդակներում քննարկման փուլում են գտնվում «Բնության հատուկ պահպանվող տարածքներում մոնիտորինգի կազմակերպման և իրականացման կարգի», «Բնության հատուկ պահպանվող տարածքներում կադաստրի վարման կարգի», «Բնության հատուկ պահպանվող տարածքների օգտագործման կարգի» նախագծերը։

ԳԼՈՒԽ 3

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ՝ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆՆ ՈՒ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆԸ

Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրի իրականացման հիմնական սկզբունքներից է ապահովել շահագրգիռ կողմերի մասնակցությունը։

1. 2002թ. ՀՀ հասարակական և գիտական հատվածների, երկրագնդի խորհրդի և UNDP-ի կողմից մշակվեց «Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման հայեցակարգը», ուր զգալի տեղ է հատկացված անտառների և կանաչ տնկարկների պահպանության ու ընդլայնման, հողային պաշարների արդյունավետ օգտագործման, հողերի դեգրադացման և անապատացման գործընթացների կանխման հիմնախնդիրներին։ Հայեցակարգի հիմնական սկզբունքներն ու մոտեցումները հաստատվեցին «Կայուն զարգացումը Հայաստանում. Ռիոյից Յոհաննեսբուրգ» ազգային համաժողովում և ընդգրկվեցին «Ռիո+10» Ազգային գնահատման զեկույցում։
2. REC Caucasus ծրագրի շրջանակներում ք.Արարատի համար մշակվել է «Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների տեղական պլան», ուր ակտիվ մասնակցել են «Արարատի մարզի կանաչներ», «Էկոլոգիական կենսակայունություն» և այլ ՀԿ-ներ, ինչպես նաև տեղական համայնքը։ Մշակվել է նաև "21-րդ դարի տեղական օրակարգերի ուղեցույց անցումային տնտեսությամբ երկրների քաղաքների համար" (Հարավկովկասյան ռեգիոնալ ծրագրի ղեկավար "Հանուն ԿՄՁ" ասոցիացիա/ UNEPcom- ը)։
3. 2002-2004թթ. ՀԿ-ները ակտիվ մասնակցել են «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» մշակմանն ու քննարկմանը և ներկայումս մասնակցում են դրա իրականացման գործընթացին։ Հատկապես բնապահպանական ՀԿ-ների պնդման շնորհիվ Կառավարության և ՀԿ-ների միջև ստորագրված համաձայնագրում լիարժեք ընդգրկված են էկոլոգիական ասպեկտները։ Հաշվի առնելով, որ գյուղական վայրերում աղքատությունը զգալիորեն կապված է հողերի ոռոգման և մելիորացիայի հիմնախնդիրների հետ, բնապահպանական ՀԿ-ների մասնակցությունը նպատակաուղղված է հողօգտագործման արդյունավետության բարձրացմանը և հողերի դեգրադացման ու անապատացման կանխարգելմանը (ԱՅՌԾ Համակարգող խորհրդում և Բանակցող խմբում մասնակցում է «Հանուն Կայուն մարդկային զարգացման» ասոցիացիան, իսկ Աշխատանքային խմբում «Էկոլոգիական ակադեմիա» ՀԿ-ն)։ ԱՅՌԾ իրականացման շրջանակներում գործում է «Բաց ֆորումը» (Գերմանիա/JTZ կազմակերպության աջակցությամբ), ուր քննարկվում են ծրագրի հիմնախնդիրները։ Մի շարք հասարակական կազմակերպություններ («Շողեր» միությունը, «Արագա», «Էկո-ակադեմիա», «Սպառողների միություն» «Սպառողների իրավունքների պաշտպանության միություն»,

- «Տարածաշրջանային զարգացման կենտրոն» և այլն) ակտիվ մասնակցում են այդ գործընթացին, մասնավորապես ֆորումի արտագնա նիստերին, երբ տեղական համայնքների հետ քննարկվում են հողերի պահպանության և ռացիոնալ օգտագործման հիմնախնդիրները և դրանց հաղթահարման ուղիները:
4. 2004թ.-ից ՀՀ Վարչապետի ղեկավարությամբ գործում է «ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամը», որի կազմում ընդգրկված են «Հայաստանի կանաչների միությունը» և «Հանուն ԿՄՁ» ասոցիացիան: 2005թ.-ից գործում է նաև «Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման դիտանցը և զնահատումը իրականացնող միջգերատեսչական աշխատանքային խումբը», ուր ընդգրկված են «Կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանություն», «Կանաչագարդ Հայաստան», «Հանուն ԿՄՁ» ասոցիացիան և այլ ՀԿ-ներ:
 5. 2005-2006թթ. «Քարավան-88» բարեգործական ՀԿ-ն Եկեղեցիների համաշխարհային խորհրդի Հայաստանյան միջեկեղեցական կլոր սեղանի աջակցությամբ Հայաստանի գյուղական համայնքներում իրականացնում է «Զրամատակարարում և սանիտիզացիայի կայանների բարելավում» ծրագիրը:
 6. 2006թ. ՀՀ հայրենակցական միությունները կազմակերպեցին «Միասնական ծառատունկ» հանրապետության ամբողջ տարածքում, որին ակտիվորեն մասնակցեցին հասարակության բոլոր խավերը:
 7. ՀԿ-ները աջակցում են նաև այլընտրանքային էներգետիկայի, որպես անտառների և կանաչ տնկարկների պահպանության գործուն միջոցի, զարգացմանը: Այսպես «Էկոթիմ» ՀԿ-ն բազմակողմանի աջակցություն է ցուցաբերում ՀՀ-ում այլընտրանքային էներգետիկայի զարգացմանը, մասնավորապես աջակցում է փոքր ՀԷԿ-երի համակարգի կայացմանը: «Տապան» էկո-ակումբը աջակցում է արեգակնային էներգետիկայի զարգացմանը:
 8. Երևան քաղաքի կանաչ տարածքների և ջրային մակերեսների պահպանության նպատակով 2002թ. սկզբին մի քանի ՀԿ-ներ (Տարածաշրջանային զարգացման կենտրոն, Բուսաբանական ընկերություն, «Տապան» էկո-ակումբ, «Հանուն ԿՄՁ» ասոցիացիա, «Սոցիալ-տնտեսական միություն», «Սոցիալ-տնտեսական հիմնադրամ») ստեղծեցին «Ի պաշտպանություն Երևանի կանաչ տարածքների» Դաշինք, որը ներկայումս միավորում է 39 հասարակական կազմակերպություն: 2002-2004 թթ. դաշինքը OSCE և USAID աջակցությամբ իրականացրեց մի շարք ակցիաներ (ցույց, պիկետ, կլոր սեղաններ իշխանությունների նեկայացուցիչների հետ, մամլո ասուլիսներ, հեռուստատեսային և ռադիո-քննարկումներ և այլն): Հաջողվեց կանխել մի քանի կանաչ տարածքների կառուցապատումը: 2005թ. Դաշինքի 2 անդամ (Տարածաշրջանային զարգացման կենտրոնի և «Հանուն ԿՄՁ» ասոցիացիայի ներկայացուցիչները) ընդգրկվեցին Երևանի քաղաքապետին կից գործող Քաղաքաշինական խորհրդի կազմում: 2005թ. Դաշինքի, նրա «SOS-Երևան» աշխատանքային խմբի, հատկապես «Էկո-լուր» ՀԿ-ի և ՎԵՄ-ստուդիայի ջանքերով ստեղծվեց «Անապատացող քաղաք» ֆիլմը, որը ցուցադրվեց Հայաստանի Ամերիկյան համալսարանում կազմակերպված հասարակական լսումների ժամանակ, հեռուստատեսային մի քանի ծրագրերով և ստացավ OSCE ու Օրիոս կենտրոնի լրագրողական մրցույթի առաջին մրցանակը:
 9. 2005թ.USAID NDI ծրագրի աջակցությամբ ստեղծվեց էկոլոգիական ՀԿ-ների և ՀՀ կուսակցությունների ֆորում, ուր քննարկվում են ՀՀ առաջնահերթ բնապահպանական խնդիրները, հատկապես անտառների և այլ կանաչ տարածքների պահպանության և անապատացման դեմ պայքարի հիմնախնդիրները: 2006թ. դաշինքի և ֆորումի ջանքերով ՀՀ Ազգային ժողովի Սոցիալական, առողջապահության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի հետ համատեղ ՀՀ Ազգային ժողովում կազմակերպվեց Երևանի էկոլոգիական իրավիճակին նվիրված խորհրդարանական լսումներ: ՀԿ-ները ներկայացրեցին համապատասխան առաջարկություններ, որոնց իրականացման նպատակով այժմ ձևավորվում է միջգերատեսչական հանձնաժողով ՀԿ-ների մասնակցությամբ:
 10. 2005թ. շնորհիվ Դաշինքի և համապատասխան շահագրգիռ կողմերի նպատակային ջանքերի՝ հաջողվեց փոփոխել Շիկահողի արգելոցով անցնող մայրուղու կառուցման նախագիծը: Ստեղծվեց «SOS-Շիկահող» աշխատանքային խումբը, որին միացան նաև WWF Հայաստանյան մասնաճյուղը, «Հայաստանի անտառները», «Հայաստան ծառատունկ» ծրագիրը և Հայաստանի Ամերիկյան համալսարանի բնապահպանական բաժինը: Իրականացվեցին բազմաթիվ ակցիաներ թե Երևանում, թե արգելոցի տարածքում, նկարահանվեց ֆիլմ, կազմակերպվեցին մամուլի մի քանի ասուլիսներ, հեռուստահաղորդումներ, դիմումներ հղվեցին բազմաթիվ միջազգային կազմակերպություններին, ներգրավվեց մարզի բնակչությունը և այլն: Շրջակա միջավայրի պահպանության օրվա առթիվ ՄԱԿ-ի գրասենյակում, իսկ Անապատացման դեմ պայքարի միջազգային օրվա առթիվ Ամերիկյան համալսարանում, կազմակերպվեցին հասարակական լսումներ, ուր մասնակցեցին նաև ԱԺ և Կառավարության ներկայացուցիչներ: Արդյունքում ՀՀ կառավարության կողմից ընդունվեց համապատասխան որոշում:
- Այս ոլորտում ակտիվ գործունեություն են ծավալում նաև տեղական ՀԿ-ները: Օրինակ, 2005թ. Ստեփանավան ք. ՀԿ-ները, "Լոռե" էկոակումբի ղեկավարությամբ կարողացան կանխել Գյուլաքարակի

դենդրոպարկի հարակից տարածքում սկսված ապօրինի անտառահատումները: Մեղավորները պատժվեցին:

Կան նաև տվյալ խնդրին նվիրված ՀԿ-ների կողմից հարուցած դատական հայցեր: Այսպես, «Տարածաշրջանային զարգացման կենտրոն», «Ա.Դ.Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» և «Հայկական բուսաբանական ընկերություն» ՀԿ-ները, չստանալով բավարար լուծում ՀՀ դատական ատյաններում "Դալմայի այգիների" կառուցապատման հիմնախնդրի վերաբերյալ /որը անապատացման ռիսկեր է պարունակում/, դիմել են Օրիուսի կոնվենցիայի կիրարկումը հսկող համապատասխանության հանձնաժողով:

11. Հայաստանի կողմից Օրիուսի Կոնվենցիայի ստորագրմամբ և վավերացմամբ ակտիվացավ հասարակության մասնակցությունը շրջակա միջավայրի պահպանության առնչվող որոշումների պատրաստման եւ ընդունման գործում: ՀՀ Բնապահպանության նախարարությունն սկսեց առավել սերտ համագործակցել հասարակական կազմակերպությունների հետ: Այդ համագործակցության շրջանակներում և ԵԱՀԿ աջակցությամբ Բնապահպանության նախարարությունում ստեղծվեց Օրիուս-կենտրոն և 4 Օրիուս-կենտրոններ Հայաստանի տարբեր շրջաններում:
12. 2004-2005թթ. «Խազեր» էկո-մշակութային ՀԿ-ն OSCE աջակցությամբ հրատարակել է գրքույկներ և պաստառներ երեխաների համար գլոբալ էկոլոգիական կոնվենցիաների թեմաներով և մի շարք դասընթացներ անցկացրել այդ նյութերով հանրապետության դպրոցներում:
13. 2005թ. «Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն»(EPAC) ՀԿ-ն OSCE աջակցությամբ պատրաստել և հրատարակել է «Հայաստանի Հանրապետության էկոլոգիական իրավունք» նորմատիվ ակտերի ժողովածուն, որը իրազեկում է բնակչությանը նաև հողերի դեգրադացման ու անապատացման իրավական մեխանիզմների վերաբերյալ:
14. "Էկոսերունդ" ՀԿ-ն Թուֆենկյան հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ N155 միզնակարգ դպրոցում հիմնել է "Բուսաբանական այգի" Երևանի թաղամասերից մեկում, և դպրոցում հիմնել է ակտիվ աշակերտներից կազմված խումբ՝ թաղամասում կատարվող ծառահատումների դեմ պայքարելու համար:
15. "Կենսաբազմազանության և լանդշաֆտների միություն" ՀԿ-ն "Էկոսերունդ" ՀԿ-ի հետ համատեղ, ԱՄՆ դեսպանատան ֆինանսական աջակցությամբ, հիմնել են "Էկոսերունդ" ճամբարը՝ ուսումնական հաստատությունների ուսանողների ակտիվ մասնակցությամբ անապատացման դեմ պայքարելու նպատակով: 2004-2005թթ. ընթացքում դասընթացներ են տրամադրվել կենսաբազմազանության մշակութային և հիմնական բնապահպանական կոնվենցիաների վերաբերյալ:
16. Առանձնապես կարևորվում են ԳԱԾ-ի շրջանակներում մշակված չորս առաջնահերթ պիլոտային ծրագրերի իրականացումը: 2003-2006թթ. իրականացվեցին երկու առաջնահերթ պիլոտային ծրագրեր, որոնք ֆինանսավորվեցին ՀՀ բնապահպանության նախարարության և ՍԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...» Կոնվենցիայի Քարտուղարության միջև կայացած բանակցությունների արդյունքում (2003թ հունվար): Նշված ծրագրերը իրականացվել են համայնքների բնակչության ակտիվ մասնակցության պայմաններում (տես Գլուխ 5-ի երկրորդ բաժնի կետ 1 և 2):
17. 2004թ. OSCE, UNDP/GEF ծրագրի և UNDP-ի աջակցությամբ "Հանուն ԿՄՁ" ասոցիացիա/UNEPCom-ը, ՀՀ Աժ Սոցիալական, առողջապահության և բնապահպանության մշտական հանձնաժողովի ու Օրիուս-կենտրոնի հետ համատեղ կազմակերպեցին ՀՀ Ազգային ժողովում կայուն զարգացման հիմնախնդիրներին նվիրված կլոր սեղան, ուր ներկայացվել են և գլոբալ էկոլոգիական կոնվենցիաները, մասնավորապես UNCCD շրջանակներում իրականացվող գործունեությունը և առկա հիմնահարցերը:
18. 2005թ. OSCE և UNDP-ի աջակցությամբ, "Հանուն ԿՄՁ" ասոցիացիա/UNEPCom-ը, Օրիուս-կենտրոնի և "Սահմանադրական կենտրոն" ՀԿ-ի հետ համատեղ կազմակերպեցին "Կայուն զարգացման սահմանադրական երաշխիքները" թեմայով կլոր սեղան Սահմանադրական դատարանի շենքում, ուր նաև համապատասխան տեղեկատվություն և նյութեր են ներկայացվել գլոբալ էկոլոգիական կոնվենցիաների, մասնավորապես UNCCD վերաբերյալ:
Վերոհիշյալ 2 կլոր սեղանի նյութերը տպագրվել են և լայնորեն տարածվել ՀՀ-ում:

ԳԱԾ-ի արդյունավետ իրականացմանը մասնակցային գործընթացի ապահովման կարևոր նախապայմաններից է հիմնախնդիրների վերաբերյալ ազգաբնակչության իրազեկության բարձրացման և շահագրգիռ կողմերի ուսուցման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները: 2002-2006թթ. այս ուղղություններով Հայաստանում արձանագրվել են հետևյալ գործողությունները:

Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի շրջանակներում 2005թ. ՀՀ Տավուշի և ՀՀ Գեղարքունիքի մարզերում կազմակերպվել են մարզային ՁԼՄ-երի հետ աշխատանքային սեմինարներ, որոշվել են համապատասխան թեմաները և կազմվել է գործողությունների իրականացման ժամանակացույց: Պատրաստվել և եթեր է հեռարձակվել 982 րոպե տևողությամբ 73 հեռուստահաղորդում, այդ թվում՝ 210 րոպե տևողությամբ 18 հաղորդում հանրապետական, 380 րոպե տևողությամբ 19 հաղորդում Գեղարքունիքի մարզային, 392 րոպե տևողությամբ 26 հաղորդում Տավուշի մարզային հեռուստաալիքներով:

Հանրապետական և մարզային թերթերում, տեղեկագրերում տպագրվել է 152 հոդված, վերլուծություն, հրապարակում, այդ թվում՝ թերթերի 44 նպատակային էջ: Բացի այդ, մշակվել են համայնքային իրազեկության ծրագրեր, որոնց իրականացման շրջանակներում միայն Դիլիջանի քաղաքային համայնքում իրականացվել են 18 միջոցառումներ, իսկ ՀՀ Տավուշի մարզի գյուղական համայնքներում՝ 25: ՀՀ Գեղարքունիքի մարզի գյուղական համայնքային իրազեկության շրջանակներում իրականացվել են 54 միջոցառումներ, իսկ քաղաքային համայնքներում՝ 26: Նկարահանվել են 2 տեսաֆիլմեր «Սևան» և «Դիլիջան» ազգային պարկերի վերաբերյալ, որոնք հեռարձակվել են հանրապետական և մարզային հեռուստաընկերությունների կողմից: Տպագրվել են շուրջ 30 անուն տեղեկատվական նյութեր, որոնք ընդգրկում են «Կենսաբանական բազմազանության մասին» և «Օրհուսի» կոնվենցիաների հայերեն թարգմանությունները, էկոլոգիական իրավունքի հարցերը, Հայաստանի կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության առանձնահատկությունները, պահպանվող տարածքների կառավարման պլանների մշակման կարևորությունը և այլն: Մշակվել և տպագրվել են նաև «Հայաստանի անտառային ազգային քաղաքականությունը և ռազմավարությունը», «Հայաստանի անտառային ազգային ծրագիրը», ուր ակտիվ մասնակցություն են ունեցել ՀԿ-ներ:

Նույն ծրագրի շրջանակներում 2003-2006թթ. զգալի աշխատանքներ են տարվել պետական մարմինների աշխատակազմերի և հասարակայնության որոշակի շերտերի ուսուցման ուղղությամբ: Հատկապես հիշատակման են արժանի հետևյալ գործողությունները.

- ՀՀ Տավուշի և ՀՀ Գեղարքունիքի մարզերի համայնքներում սեմինարներ են իրականացվել համայնքային արոտավայրերի արդյունավետ կառավարման, համայնքային խոտհարքների վերականգնման և բարելավման, հողերի արդյունավետ մշակման մեթոդների, պարարտանյութերի օգտագործման, ցանքաշրջանառության իրականացման, անասնապահության և մեղվաբուծության արդյունավետ մեթոդների վերաբերյալ.
- 2004թ. Բնապահպանության նախարարության Կենսառեսուրսների կառավարման գործակալությունում տեղադրվել են ԲՊԿԶՆ Ծրագրի տարածքների արբանյակային պատկերները, մշակվել են ուսումնական ծրագրերը և անձնակազմի համար իրականացվել է համապատասխան ուսուցում.
- «Սևան» և «Դիլիջան» ազգային պարկերի համար պահպանվող տարածքների կառավարման պլանավորում և կենսաբազմազանության մոնիտորինգ» խորհրդատվական ծառայության շրջանակներում 2005 թվականին կատարվել են պարկերի աշխատակիցների կարիքների գնահատման աշխատանքներ, որոնց արդյունքների հիման վրա մշակվել են ուսումնական ծրագրեր և իրականացվել են եռամսյա մասնագիտական որակավորման դասընթացներ:

Բացի այդ ծրագրի շրջանակներում 2005 թվականից աշխատանքներ են իրականացվում «Կենսաբազմազանության պահպանմանն ուղղված համայնքային փոքր դրամաշնորհային ծրագրերի» իրագործման ուղղությամբ: Ծրագրերը պետք է կազմվեն և իրականացվեն Տավուշի և Գեղարքունիքի մարզերի համայնքների անդամների կողմից: Մասնակցող համայնքները ֆինանսական աջակցություն ստանալու հնարավորություն կունենան (առավելագույնը 5000 ԱՄՆ դոլար), կենսաբազմազանության պահպանությանը նպաստող տեղական նախաձեռնությունների համար, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն շահավետ կլինեն տեղական բնակչության համար և կնվազեցնեն պահպանվող տարածքների և կենսաբանական ռեսուրսների վրա գործադրվող ճնշումը: Ծրագրի մեկնարկը նախատեսված է 2006 թվականի հունիսից և կֆինանսավորվեն շուրջ 50 համայնքային փոքր դրամաշնորհային ծրագրեր:

«Տապան» Էկո-ակումբը «Նորվեգական բնության պահպանության ընկերության» աջակցությամբ 2000 թ.-ից Հայաստանում իրականացնում է SPARE (Էներգիայի և ռեսուրսների դպրոցական ծրագիր) միջազգային ծրագիրը: SPARE ծրագիրը իրականացվում է ԱՊՀ երկրներում, Լեհաստանում և Մակեդոնիայում: Անցած 6 ուսումնական տարիների ընթացքում ծրագրում մասնակցել են ՀՀ 9 մարզերի 115 դպրոցների շուրջ 2000 աշակերտներ: SPARE արտադասարանական պարապմունքներն անցկացնելու համար տրամադրվում են ռուսերենից թարգմանված և տեղայնացված «SPARE դասագիրք»-ը, դասավանդման «Մեթոդական ձեռնարկ»-ը, «SPARE-Աշակերտական տետրեր» և «SPARE-Ազգային լրացում -Հայաստան» ձեռնարկը: Դասագրքի և ձեռնարկների պատրաստման գործում մեծ աջակցություն են ցուցաբերել Կրթության ազգային ինստիտուտի և Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտի մասնագետները: Բոլոր ուսումնական նյութերում հնարավորինս արտահայտվել են հողերի դեգրադացման դեմ պայքարի և կենսաբազմազանության պահպանման դրույթներն ու խնդիրները: Դպրոցներին բաժանվել են նաև բազմաբնույթ թռուցիկներ, բրոշյուրներ ու պատառներ: SPARE խմբերի աշակերտների համար կազմակերպվում են էքսկուրսիաներ դեպի ՀԷԿ-եր, Հայկական ԱԷԿ և բնության հուշարձաններ: 3 դպրոցների տարածքներում իրականացվել է ծառատունկ: SPARE խմբերում սովորած աշակերտները կազմակերպում են «Դպրոցական էկոլոգիական խմբեր», հսկողություն սահմանում դպրոցում էլեկտրաէներգիայի և ջրի օգտագործման վրա, խնամում դպրոցամերձ կանաչ տարածքները: SPARE դպրոցների ուսուցիչներն ու

աշակերտները մասնակցել են «Էներգիա և ռեսուրսներ» ամենամյա միջազգային մրցույթին, շահել են մրցանակներ և պատվոգրեր: Ծրագրում մեծ տեղ է հատկացվում այլընտրանքային էներգետիկայի քարոզմանը: Աշակերտները սովորել են մեկուսացնել դասարանների պատուհանները, պատրաստել և օգտագործում են «արևային վառարաններ»: Ծրագրի շրջանակներում Երևանի «Միխայիլ Սեբաստացի» կրթահամալիրում 2005 թ. ապրիլի 23-ին տեղադրվեց արևային տաքացուցիչ: Շուտով SPARE դպրոցներում կտեղադրվեն նման ևս երկու արևային տաքացուցիչներ:

“Չայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի” ՅԿ-ն իրականացրել է մի քանի ծրագրեր, նվիրված տոքսիկ թափոնների և կոշտ կենցաղային թափոնների կառավարման և հողերի պաշտպանության հիմնախնդիրներին, ուր զգալի տեղ է զբաղեցրել նաև բնակչության իրազեկման գործունը:

ՅԿ-ները նաև ակտիվորեն մասնակցում են օրենքների և օրենսգրքերի քննարկմանը, ջանում առավելագույնս ներառել նրանց մեջ UNCCD-ից բխող հասկացություններն ու ձևակերպումները:

ԳԼՈՒԽ 4

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ՝ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՐԿՐՆԵՐԻ-ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿՈՂՄԵՐԻ ՈՒ ԱՅԼ ՇԱՐՎԱԳՐԳԻՌ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՆԸ

«Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիրը» իրականացնելու համար անհրաժեշտ է նաև դոնոր պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությունը: Այդ կապակցությամբ վարվում են համապատասխան բանակցություններ ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...» Կոնվենցիայի Քարտուղարության և «Գլոբալ Մեխանիզմի» միջև՝ նպատակ ունենալով զարգացնել միջազգային համագործակցությունը: Նախատեսվում է Հայաստանում կազմակերպել «Կլոր սեղան» ներգրավելով պոտենցիալ դոնորներին և բոլոր շահագրգիռ կողմերին:

2003թ. մայիսին Կիևում կայացած Շրջակա միջավայրի մախարարների 5-րդ համաժողովական համաժողովի ընթացքում մախարարների կողմից հավանության է արժանացել Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի /ԱԵԿԿ/ երկրների համար Բնապահպանական ռազմավարությունը: 2004թ. հոկտեմբերին Թբիլիսիում կայացած մախարարական համաժողովին քննարկվել է ռազմավարության իրագործման ընթացքը: Քանի որ 2007թ. Բելգրադում կայանալիք 6-րդ մախարարական համաժողովին ԱԵԿԿ երկրները ներկայացնելու են իրենց հաջողությունները և բացթողումները նախկինում ընդունված որոշումների և փաստաթղթերի վերաբերյալ, Հայաստանում նախատեսվում է մշակել միջոցառումներ և գործողություններ նշված ռազմավարության 7 նպատակների իրականացման համար:

2004 թ-ից ԳԷՖ-ը հանդես է գալիս «Ազգային երկխոսություն» նոր նախաձեռնությունով, որով նախատեսվել է նաև Հայաստանի մասնակցությունը: ԳԷՖ-ի հետ Հայաստանի Հանրապետության Ազգային երկխոսության աշխատաժողովը կայացել է 2004թ. հոկտեմբերի 14-15-ը Երևանում: Կազմվել է ԳԷՖ-ի ազգային երկխոսության աշխատաժողովի Որոշում, որտեղ ամրագրվել են հետագա համագործակցության ոլորտները, կայացած սեմինարի արդյունքները և աջակցության ձևերը: Որոշումը ներկայացվել է ԳԷՖ-ին:

2005թ. ՀՀ բնապահպանության մախարարությունը դիմել է ԳԷՖ-ին՝ Հայաստանը ԳԷՖ-ի Փոքր Դրամաշնորհների Ծրագրերում (SGP) ընդգրկելու համար:

Հայաստանի Հանրապետությունը, 2005թ. սեպտեմբերից հանդիսանալով Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) 64-րդ անդամը, գործունեություն է ծավալել երկրի ռազմավարական ուղղությունների զարգացման շուրջ Բանկի աջակցությունը ստանալու հարցում: 2005թ. քննարկվել է մշակվող «Տնտեսական Զեկույցի և գործունեության միջնաժամկետ ռազմավարության» (ՏԶԳՄ) ուղղությունները, բացահայտվել են բնապահպանական առկա մարտահրավերները և ֆինանսավորման կարիք ունեցող ոլորտները: Նախատեսվում է 2006թ. ՏԶԳՄ ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը:

2006թ. մարտին ՄԱԿ-ի ԶԾ հայաստանյան գրասենյակի և ՀՀ բնապահպանության մախարարության միջև ստորագրվել է 2006թ. Տարեկան Աշխատանքային Պլանը իր 2 բաղադրիչներով՝ «Էներգիայի արդյունավետ օգտագործում» և «Բնական ռեսուրսների պահպանություն և կայուն կառավարում», որի շրջանակներում նախատեսվում է 2006-2007թթ. իրագործել ՇՄԱԳԾ արդիականացնելու նպատակով ծրագրային գործընթաց: Ներկայումս ընթանում են ծրագրի կառավարման օղակի ձևավորման աշխատանքները:

ԳԼՈՒԽ 5

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԿԱՄ ՊԼԱՆԱՎՈՐՎՈՒՄ ԵՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ, ՆԵՐԱՌՅԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՊԱՅՈՒՄՆԵՐ, ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ, ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԸՆԴՂԱՅՆՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԵՐԱՇՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

5.1. Անցած փորձի պատշաճ վերլուծությունը

Անցած փորձի վերլուծությունը ցույց է տվել, որ Հայաստանում ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...» Կոնվենցիայի իրականացմանը նպաստող ուժեղ կողմերից են ՀՀ բնապահպանության նախարարության և UNCCD-ի քարտուղարության միջև հաստատված մշտական կապը, Կոորդինացման հանձնաժողովի կազմում ընդգրկված 11 գերատեսչությունների և ՀՀ բնապահպանության նախարարության 9 ճյուղային ստորաբաժանումների ներկայացուցիչների ներգրավումը, Կոորդինացման հանձնաժողովի նախագահի, ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալի, և հանձնաժողովի տեղակալի, Կոնվենցիայի իրականացման պատասխանատու անձի, մշտական կապը UNDP-ի Երևանյան գրասենյակի հետ: Որպես թույլ կողմ կարելի է ընդունել Կոորդինացման հանձնաժողովի ֆինանսական ինքնուրույնության բացակայությունը, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և նախարարությունում նշանակված պատասխանատու անձի օգնականի միջև կապի ոչ բավարար լինելը և այլն:

Հարկ է նշել, որ Հայաստանում «Անապատացման դեմ պայքարի ԳԱԾ»-ի մշակման ընթացքում երկրում անապատացման հիմնախնդիրների և դրանց նպաստող պատճառների վերաբերյալ կատարված պատշաճ վերլուծության արդյունքում հնարավոր եղավ սահմանել անապատացման գործընթացների կանխարգելման/մեղմացման հիմնական ռազմավարական ուղղությունները, որոնց իրատեսական լինելու հանգամանքը դրսևորվեց ԳԱԾ-ի իրականացման փուլում:

Այսպես՝ 2003 թվականից հանրապետությունում.

- սկսվեց համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերը համայնքներին սեփականության իրավունքով անհատույց փոխանցման գործընթացը՝ ապահովելով հողերի կառավարման ապակենտրոնացումը
- անընդհատ կրթության համակարգի բոլոր աստիճաններում իրականացվում է էկոլոգիական կրթություն, որում զգալի մասնաբաժին են կազմում անապատացման հիմնախնդիրները
- իրավական ակտերի նախագծերի մշակումը գրեթե չընդհատվող բնույթ է կրում, որի ընթացքում հաշվի են առնվում նաև միջազգային չափանիշները
- միջոցներ են ձեռնարկվում կառավարման տարբեր մարմինների միջև իրավասությունների հստակեցման ուղղությամբ
- զգալիորեն ընդլայնվել են տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության շրջանակները.
- սկսվել են հողային նոր հաշվեկշիռների կազմման աշխատանքները.
- կառավարման տարբեր օղակներում զգալիորեն բարելավվել է կապի միջոցների և համակարգչային տեխնիկայի հասանելիությունը.
- տարբեր ոլորտում զգալիորեն ընդլայնվել են վարկային և ներդրումային ծրագրերի իրականացման գործընթացները և այլն:

Վերլուծության արդյունքում պարզվել է նաև, որ ՀՀ-ում ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...» Կոնվենցիայի պարտավորությունների իրականացմանը դեռևս խոչընդոտում է.

- Հայաստանում անապատացման դեմ պայքարի ԳԱԾ-ի իրականացման համար պոտենցիալ դոնորների և բոլոր շահագրգիռ կողմերի միջև անհրաժեշտ կապերի բացակայությունը
- հողերի կայուն կառավարումը ապահովելու նպատակով կարիքների գնահատման բացակայությունը
- տարբեր ոլորտներում կադրերի վերապատրաստման /մասնագիտական/ ոչ բավարար լինելը
- հողերի մոնիտորինգի և տեղեկատվության համակարգի ոչ լիարժեք լինելը
- տեղերից ծրագրային առաջարկների բացակայությունը
- նոր հողային հաշվեկշիռի ոչ լիարժեքությունը
- անապատացման հարցերի ուսումնասիրությունը միայն բնագիտական սեկտորի կողմից

- բուհական ծրագրերում անապատացման հարցերին և խնդիրներին առնչվող համապատասխան գրականության բացակայությունը, որոնք մեծամասնությամբ բացատրվում են ֆինանսական միջոցների սղությանը:

5.2. Անապատացման դեմ պայքարի ուղղությամբ մշակված տեխնիկական ծրագրերը և գործառնական համալիր նախագծերը

1. «ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքի անապատացման ենթարկված հողատարածքների վերականգնման ծրագիր». Այս ծրագրով նախատեսված էր վերականգնել 370 հա գյուղատնտեսական մշակակության հողեր, որոնք ներառում են 30 հա խաղողի, 160 հա պտղատու այգիների, 50 հա բանջարաբուստանային մշակաբույսերի, 40 հա առվույտի և այլ հողատարածքներ: Ծրագրի իրականացումով միաժամանակ կվերականգնվեն «Խոսրովի անտառ» պետական արգելոցի ջրային հաշվեկշիռը: Ծրագիրը մեկնարկեց 17.06.2003թ. (Անապատացման դեմ պայքարի միջազգային օրը) ՀՀ բնապահպանության նախարարի, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) Հայաստանյան գրասենյակի Մշտական ներկայացուցչի, ՀՀ Կոտայքի մարզպետի, տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, համայնքի բազմաթիվ բնակիչների անմիջական մասնակցությամբ հանդիսավոր պայմաններում նշվեց «Անապատացման դեմ պայքարի» միջազգային օրը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ էր վերականգնել նախկինում գործող ջրանցքը, որը ներառում է բաց ջրատարի մաքրում քարերից և կեղտից, վնասված հատվածների նորոգում, մակերեսների ցեմենտապատում /առաջին փուլ/, խողովակների տեղադրում և այլն /երկրորդ փուլ/: Ծրագրի իրականացումը կնպաստի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը (զբաղվածության աճ, գյուղմթերքների արտադրության բարձրացում, չքավորության նվազեցում):

ՄԱԶԾ-ի Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ 2004թ. իրականացվեց ծրագրի առաջին փուլը, որով ապահովվեց ջրանցքի վերականգնված հատվածում դրենաժված ջրերի շուրջ 25-30լ/վրկ. ելք, ընդ որում համայնքի բնակիչները աշխատանքների իրականացման ժամանակ ներդրեցին իրենց ավանդը:

Ծրագիրն ամբողջությամբ իրականացնելու համար ՄԱԶԾ-ն նախաձեռնեց ջրանցքի ամբողջական վերականգնման նախագծի մշակում, որով այդ աշխատանքները գնահատվեցին 90 հազ. ԱՄՆ դոլար /երկրորդ փուլ/: Երկրորդ փուլի աշխատանքների կատարմանն աջակցելու նպատակով, Գառնիի գյուղապետարան է դիմել գյուղի մեկ այլ ոռոգման ջրատարի վրա ՓՀԷԿ կառուցած և ներկայումս շահագործող «Նարեներգո» ՍՊԸ-ն, որն էլ իր պատրաստականությունն է հայտնել կառուցելու վերջին միջազգային իր կողմից ներդրելով համապատասխան միջոցներ (աշխատուժ, շինարարական տեխնիկա, անհրաժեշտ նյութեր և այլն) ի լրում ՄԱԶԾ-ի կողմից իրականացման համար հատկացվելիք 40 հազ.ԱՄՆ դոլար գումարին:

2. «ՀՀ Տավուշի մարզի Մակարավանք հուշահամալիրի տեղամասի ինժեներաերկրաբանական հետազոտական աշխատանքների ծրագիր». Այս ծրագրի նպատակն է Մակարավանքի հուշահամալիրը սողանքային երևույթներից պահպանելը, որի համար անհրաժեշտ է իրականացնել սողանքային տարածքի հետազոտում և հակասողանքային միջոցառումների մշակում:

Ծրագրի իրականացումը սկսվեց 09.08.2003 թ. և հաջողությամբ ավարտվեց 2005թ: Սողանքային երևույթների մոնիտորինգի տվյալների համեմատությունը մի շարք այլ տվյալների հետ թույլ տվեցին ստանալ սողանքի իրատեսական պատկերը և աջակներ մշակվեցին նվազեցնելու և կանխարգելելու այդ երևույթները:

3. 2002-2006թթ. մշակվել են մի շարք տեխնիկական ծրագրեր և գործառնական նախագծեր, որոնց իրականացումը զգալիորեն կնպաստի անապատացման դեմ արդյունավետ պայքարին: Դրանցից են.

ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մշակվել են քաղաքաշինական մի շարք ծրագրային փաստաթղթեր, որոնք նպատակաուղղված լինելով տարածական պլանավորման կանոնակարգմանը, միաժամանակ ներառում են բնապահպանական, ինչպես նաև կայուն հողօգտագործման ռազմավարական խնդիրներ.

- «Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման գլխավոր նախագիծը» (հաստատվել է ՀՀ կառավարության 04.06.2003թ. № 610-Ն որոշմամբ).
- «Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածքային հատակագծման նախագիծը» (հաստատվել է ՀՀ կառավարության 11.12.2003թ. № 1787-Ն որոշմամբ).
- «Սևանա լճի առափնյա առաջնահերթ կառուցապատման ենթակա տարածքների գոտիավորման փաստաթղթերը» (հաստատվել է ՀՀ կառավարության 11.12.2003թ. № 1788-Ն որոշմամբ):

4. ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական Կոմիտեի տնտեսած միջոցների հաշվին, որպես աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին, փորձնական ծրագրի շրջանակներում մշակվել են ՀՀ Արարատի մարզի 20 համայնքների հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաները, որոնք ենթարկվել են համալիր և բնապահպանական փորձաքննության ու

համաձայնեցվել են շահագրգիռ պետական մարմինների հետ և հաստատման հետ կապված որոշակի գործառնություններից հետո կտրամադրվեն նշված համայնքներին նպաստելով, ինչպես հողօգտագործման և քաղաքաշինական, այնպես էլ բնապահպանական խնդիրների լուծմանը:

5. Մշակվել և ՀՀ Կառավարության կողմից հաստատվել են Գյումրի քաղաքի գլխավոր հատակագիծը և Շիրակի մարզի տարածքային հատակագծման ուղևագիծը:

6. 2004 թ. մշակվել են Արարատ, Արտաշատ, Մեղրի, Արտավազ, Արզնի, Ջերմուկ, Հանքավան, Արզական, Գորիս, Մարտունի, Վարդենիս, Նյուվադի, Ագարակ համայնքների գլխավոր հատակագծերը, որոնք հաստատվել են ՀՀ կառավարության կողմից:

7. 2005 թ. մշակվել են Թալին, Վեդի, Էջմիածին, Գավառ, Ստեփանավան, Չարենցավան, Արթիկ, Կապան, Եղեգնաձոր, Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ համայնքների գլխավոր հատակագծերը: Միաժամանակ նշում ենք, որ տեղական բյուջեի միջոցներով մշակվում է Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագիծը: Նշված համայնքների գլխավոր հատակագծերը գտնվում են հաստատման փուլում:

8. 2002-2004թթ. հանրապետությունում իրականացվել են կոլեկտորադրենաժային համակարգի վերագինման և մաքրման աշխատանքներ, մասնավորապես՝ վերականգնվել է 30 կմ դրենաժային համակարգ, որի արդյունքում յուրաքանչյուր տարի 8,0-9,0 հա տարածքներում հնարավոր է եղել վերացնել ջրածածկումը և կազմակերպել կայուն երկրագործության անցկացում:

9. 2003-2004թթ. «Սևան» ազգային պարկի տարածքում իրականացվել են 223 հա անտառտնկման աշխատանքներ, իսկ 2001-2005թթ. ժամանակահատվածում Սևանա լճի մակարդակը բարձրացել է 1.33մ:

10. Իրականացվել են անտառվերականգնման աշխատանքներ, որոնց ծավալները բերված են Հավելված 5-ում:

11. Ավարտվել են համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի կադաստրային քարտեզագրման աշխատանքները: 2005թ. ընթացքում ավարտվել են նաև համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող հողերի քարտեզագրման աշխատանքները, որոնք հնարավորություն են ընձեռնում ստեղծել հողային ֆոնդի սկզբնական հաշվառման նյութեր՝ ըստ սեփականության իրավունքի սուբյեկտների, ըստ նպատակային և գործառնական նշանակության ու հողատեսքերի:

Կադաստրային քարտեզագրման արդյունքների ամփոփմանը զուգահեռ իրականացվել են գույքային իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքները, որոնք ավարտվել են գրեթե բոլոր համայնքներում, որոնց արդյունքում գրանցվել են քաղաքացիների գույքային իրավունքները ավելի քան 1.5 մլն. միավորի (հողամասեր, շենքեր և շինություններ) նկատմամբ և քաղաքացիներին անվճար տրամադրվել են սեփականության իրավունքի մոտ 1.4 մլն. վկայական:

Հանրապետության բոլոր համայնքների համար իրականացվել են հողային ֆոնդի հաշվառման և համայնքներին սեփականության իրավունքով հողամասերի փոխանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստման աշխատանքները, որոնց հիման վրա ՀՀ կառավարության որոշումներով ավելի քան 800 համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականության հողերից մոտ 90% անհատույց սեփականության իրավունքով փոխանցվել է համայնքներին, միաժամանակ ի գիտություն են ընդունվել նշված համայնքների հողային հաշվեկշիռները: Ծրագրի ամբողջական ավարտը նախատեսվում է 2006թ., որից հետո կձևավորվի հողային ռեսուրսների կառավարման ավելի արդյունավետ համակարգ:

12. «Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի» շրջանակներում, իրականացվել են նաև ենթակառուցվածքների հզորացմանն ու նյութատեխնիկական բազայի հարստացմանն ուղղված հետևյալ գործողությունները.

- ՀՀ Տավուշի և ՀՀ Գեղարքունիքի մարզերի ջրհավաք ավազանների վերականգնման աշխատանքներ են իրականացվում 40 ջրհավաքներում, որոնք ներառում են 100 համայնքներ: Միայն 2005 թվականի ընթացքում 25 համայնքներում իրականացվել են 187.51 կմ երկարության առկա դաշտամիջյան ճանապարհների վերականգնման, 90 հատ (յուրաքանչյուրը 6 մ) դաշտամիջյան ճանապարհների համար ջրահեռացման խողովակների տեղադրման, 15 հատ անասունների համար ջրարբիացման կետերի կառուցման, ջրային էրոզիայի կանխարգելման 63 հատ ձորակների՝ գաբիոնների (յուրաքանչյուրը 6 ք.մ) տեղադրման, 740 հա համայնքային խոտհարքերի վերականգնման և բարելավման աշխատանքներ:
- Մշակվել են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի երեք տնկարանների վերականգնման և կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը.
- 2005թ. գարնանը ջրհավաք ավազանների կառավարման պլաններով նախատեսված գործողությունների իրականացման համար գնվել և 59 համայնքներին են հանձնվել. Պարարտանյութեր (ազոտական-430338 կգ, ֆոսֆորական-286580 կգ, կալիումական-201972 կգ), Գարնանացան ցորենի սերմ - 12400 կգ. Կերային բակլագգի մշակաբույսերի սերմ (կորնզան- 40350 կգ, առվույտ - 1875 կգ). Պտղատու ծառերի տնկիներ - 38250 հատ.
- 2005թ. աշնանը նախատեսված գործողությունների համար գնվել են և 39 համայնքներին են տրամադրվել հետևյալ նյութական միջոցները. Պարարտանյութեր (ազոտական-142382 կգ,

ֆոտոթղթեր-147742 կգ, կալիումական – 49817 կգ). Աշնանացան ցորենի սերմ – 66000 կգ. Պտղատու ծառերի տնկիներ – 6910 հատ:

5.3. Գործողությունների ծրագիր, որն իրականացվում է Կոմվենցիայով որոշված գերակա ուղղություններին համապատասխան

2002-2006թթ. իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնք համահունչ են ԳԱԾ-ին:

1. 2002թ. դեկտեմբերի 27-ից մեկնարկել է «Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագիրը», որը կավարտվի 2008 թվականին: ՀՀ Կառավարությունը Ծրագրի իրականացման համար առաջնահերթությունը տվել է Գեղարքունիքի և Տավուշի մարզերին, քանի որ Տավուշի մարզում են գտնվում հանրապետության անտառների ամենամեծ պաշարները, իսկ Գեղարքունիքի մարզում՝ ռազմավարական նշանակություն ունեցող Սևանա լիճը: Միաժամանակ երկու մարզերում էլ արձանագրվել են հանրապետությունում աղքատության միջին տվյալներից բարձր ցուցանիշներ: Ծրագիրն ընդգրկում է 3 բաղադրիչներ՝ Ջրի արժեքի ավազանների համայնքաին կառավարման, Պետական անտառների կառավարման, Կենսաբազմազանության պահպանության և պահպանվող տարածքների կառավարման:
2. Շարունակվում է իրականացվել «Իրիգացիոն համակարգի վերականգնում» ծրագիրը (Հայաստանի Հանրապետության, Միջազգային Զարգացման ընկերակցության և FAO-ի համաձայնագրով), որի արդյունքում վերականգնվել է 260 կմ ջրագիծ և միջտնտեսային ջրանցքներ, չորս պոմպակայաններ, չորս ջրավազաններ, վերականգնվել և կառուցվել են 238 խորքային հորեր, մաքրվել և անցկացվել է գործող 310 կմ դրենաժային ցանց:
3. 2004-2006 թթ. ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից իրականացվել են՝
 - Մորեխների դեմ պայքարի ծրագիրը.
 - Լեռնային շրջանների կայուն զարգացման ծրագիրը.
 - Մկնանման կրծողների դեմ պայքարի ծրագիրը.
 - Հողերի միավորման և կատարելագործված հողաշինարարական սխեմաների պատրաստման ու իրականացման ծրագիրը:
4. 2005թ. ընթացքում գյուղատնտեսական հողատեսքերի մեկտրատիվ վիճակի բարելավման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.
 - Արարատյան հարթավայրի ոռոգելի հողերի աղային հանույթի կատարում, որի շրջանակներում կազմվել են 14 համայնքների փակ դրենաժի տակ ընկած 4,0 հազ. հա ոռոգելի հողերի աղային կազմի քարտեզներ և ներկայացվել են առաջարկություններ՝ դրանց աղազերծման համար անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ.
 - Բնական կերահանդակների բարելավում և ջրարբիացում, որի շրջանակներում վերականգնվել են շուրջ 12 կմ ջրաբիացման համակարգեր՝ ջրընդունիչ կառույցներ, խողովակաշարեր և խմելատեղեր, ինչի շնորհիվ 2006 թ. օգտագործելի են դարձել ավելի քան 18000 հա հեռագնա բնական արոտներ:

5.4. Ենթատարածաշրջանային և տարածաշրջանային գործողությունների ծրագրերին կապվածության աստիճանը

Տարածաշրջանային համագործակցության հիմնական ուղղություններն են՝ օրենսդրության ներդաշնակեցումը, կոմվենցիաների իրագործման, ինչպես նաև միջազգային գործընթացներին լիարժեք մասնակցության համար միասնական մոտեցումների կիրառումը, բնապահպանական կառավարման համընդհանուր մոդելների ստեղծումը և այլն: Առանձնակի տեղ են զբաղեցնում անդրսահմանային հիմնախնդիրները: ՀՀ վարչապետի 10.10.2002թ. որոշմամբ ստեղծվել է Անդրսահմանային ջրային ռեսուրսների ՀՀ հանձնախումբը: Այն, սահմանակից երկրների համապատասխան հանձնախմբերի հետ համատեղ, իրականացնում է անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության օպերատիվ խնդիրները:

Կովկասյան երկրների բնապահպանական համագործակցության համակարգման հարցում մեծ է Կովկասի Տարածաշրջանի Բնապահպանական Կենտրոնի /ՏԲԿ/ դերը: Հայաստանը կենտրոնի հիմնադիր երկրներից է և ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացուցիչը հանդիսանում է ՏԲԿ Վարչության նախագահ: 2002թ. հուլիսի 12-13-ը Թբիլիսիում (Վրաստան) կայացավ Կովկասի ՏԲԿ-ի երկրորդ Կոնֆերանսը, որը նվիրված էր երաշտի և անապատացման հարցերին:

2005թ. փետրվարի 8-9-ը Բրյուսելում (Բելգիա) տեղի է ունեցել Կովկասի ՏԲԿ հիմնադիրների երկրորդ հանդիպումը, որին մասնակցել են Հարավային Կովկասի երեք հանրապետությունների

պատվիրակությունները (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան): Հանդիպման ընթացքում քննարկվել և գնահատվել են Կովկասյան ՏԲԿ-ի գործունեությունը հիմնադրման օրվանից անցած 5 տարիների ընթացքում, ինչպես նաև հստակեցվել է հետագա գործունեության հետ կապված երկրների դիրքորոշումը:

Հայաստանը ընդգրկվել է ՄԱԶԾ-ի, ՄԱԿ-ի ՇՄԾ-ի և ԵԱՀԿ-ի «Շրջակա միջավայր և անվտանգություն» տարածաշրջանային նախաձեռնության շրջանակներում առաջարկվող «Ռիսկի ձևափոխությունը համագործակցության» ծրագրի իրականացման գործընթացին: Նախաձեռնության շրջանակներում գործընթացը երկրում վարելու համար նշանակվել են ազգային համակարգողներ ՀՀ բնապահպանության և արտաքին գործերի նախարարությունների կողմից: 2005թ. աշնանը կայացած Խորհրդատվական Կոմիտեի հանդիպմանը ազգային համակարգողի կողմից ներկայացվել է զեկույց գործընթացի շրջանակներում տեղի ունեցած առաջխաղացումների և հետագա աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...» Կոնվենցիայի քարտուղարություն ներկայացվել է առաջարկություն՝ «Զիկատար» անտառային ուսումնական տարածաշրջանային կենտրոնի հիմնման մասին: «Զիկատար» անտառային կենտրոնը նախատեսվում է օգտագործել նաև «Անապատացման դեմ պայքարի...» Կոնվենցիայի Կենտրոնական և Արևելյան երկրների համար որպես ուսումնական տարածաշրջանային կենտրոն:

ԳԼՈՒԽ 6

ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՈՐՈՆՔ ՍՏԱՑԿԵԼ ԵՆ ԵՎ ԱՆՐՈՎԺԵՇՏ ԵՆ, ՆՇԵԼՈՎ ԿԱՐԻՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Անապատացման դեմ պայքարի 2002-2005 թթ., ինչպես նաև 2006 թ. միջոցառումների իրականացման ուղղությամբ ՀՀ պետական բյուջեով նախատեսված ծախսերը բերված են հավելված 2-ում: Բացի այդ, ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից կատարվել են նաև լրացուցիչ ծախսեր՝ հիմնականում ուղղված չնախատեսված և օպերատիվ միջամտություն պահանջող միջոցառումների համար՝ տարերային աղետների (հեղեղումներ, ջրածածկում, ափամերձ տարածքների փլուզումներ, առատ ձյուն, ուժեղ քամիներ, կարկուտ, երաշտ, գետերի, ջրանցքների ոռոգման և կոլեկտորադրեմաժային համակարգի խցանումներ, սողանքներ) հետևանքների վերացման նպատակով: ՀՀ կառավարության կողմից 10.06.2004 թ. № 891-Ն որոշմամբ հիմնադրված ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի միջոցներից 2005 թ. ծախսվել է 202,9 մլն. դրամ: Ներկայումս հանրապետությունում իրականացվում է մոտ 36 գիտական հետազոտությունների ՀՀ պետական բյուջեից պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը՝ «Անապատացման դեմ պայքարի...» Կոնվենցիայի շրջանակներում (տես՝ հավելված 3): Կան գիտական թեմաներ, որոնք բացի պետական ֆինանսավորումից ստանում են նաև միջազգային ֆոնդերի ֆինանսական աջակցությունը:
2. **«Ոռոգման համակարգի զարգացման ծրագրի»** առաջին փուլի վարկային համաձայնագիրը ստորագրվել է ՀԲ ՄԶԸ-ի հետ 2001 թ. սեպտեմբերի 1-ին: Վարկի գումարը կազմում է 24,8 մլն ԱՄՆ դոլար: Ծրագրի նպատակն է ոռոգման և դրեմաժային համակարգերի կառավարման կառուցվածքային բարեփոխումների միջոցով բարձրացնել ոռոգելի երկրագործության արդյունավետությունը, ջրամատակարարման համակարգը դարձնել կառավարելի, ֆինանսապես առողջ և գրավիչ ներդրողների համար, ջրօգտագործողներին ներգրավել համակարգերի կառավարման գործընթացի մեջ: 2005-2006 թթ. նախատեսվում է վարկային միջոցներից օգտագործել 18,6 մլն ԱՄՆ դոլար: 2004 թ. ստորագրված վարկային երկրորդ փուլի աշխատանքների գումարը կազմում է 35 մլն ԱՄՆ դոլար, 2006-2007 թթ. օգտագործման համար 11,6 մլն ԱՄՆ դոլար:
3. **«Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման Ծրագրի»** ընդհանուր արժեքն է 16 մլն. ԱՄՆ դոլար և համաֆինանսավորվում է Միջազգային զարգացման ընկերակցության կողմից տրամադրված վարկային միջոցներից (8.31 մլն. ԱՄՆ դոլար), Շվեդական Միջազգային Զարգացման Գործակալության դրամաշնորհից (1.06 միլիոն ԱՄՆ դոլար), Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամի հատկացրած դրամաշնորհից (5.12 մլն. ԱՄՆ դոլար) և Հայաստանի Հանրապետության Կառավարության ներդրումներից (1.51 մլն. ԱՄՆ դոլար):
4. **«Պատվարների անվտանգության ծրագիրը»** ՄԶԸ-ի հետ վարկային համաձայնագիրը ստորագրվել է 1999 թ. հոկտեմբերի 7-ին: Վարկի գումարը կազմում է 26,6 մլն. ԱՄՆ դոլար: Գործում է 2000 թ. ապրիլից: Նպատակն է՝ 360 հազ. բնակչության անվտանգության ապահովումը և ոռոգման համակարգերի ջրապահովվածության ավելացումը, պատվարների հուսալի շահագործման ապահովումը, ոռոգման

- նպատակով օգտագործվող ջրամբարների պատվարների վերականգնումը և պատվարների անվտանգության պահպանման միջոցառումների իրականացումը: Երկրորդ ծրագիրը իրականացվում է 2004-2009 թթ. ժամանակահատվածի համար: Արժեքը 7,5 մլն. ԱՄՆ դոլար է: Իրականացվելու են 47 պատվարների վերականգնման և անվտանգության ապահովման աշխատանքներ:
5. **«Չազարանյակի մարտահրավեր»** ծրագրի համաձայնագիրը ստորագրվել է 2006 թ. մարտի 27-ին Վաշինգտոնում՝ 5 տարի իրականացման ժամկետով: Ծրագրի արժեքն է 235,6 մլն. ԱՄՆ դոլար, որից 145,67 մլն. ԱՄՆ դոլարը կազմում է ոռոգվող գյուղատնտեսության ծրագիրը (ըստ տարիների՝ 8,24; 37,14; 41,08; 34,25; 24,97): Ծրագրի նպատակն է ընդլայնել ոռոգելի տարածքները և բարձրացնել ոռոգման համակարգերի արդյունավետությունը:
 6. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը հատկացված միջոցների հաշվին 2005 թ. մարտ-ապրիլ ամիսներին հանրապետության 8 մարզերի 30 բնակավայրերում իրականացվել են հեղեղատարների հունների մաքրման, ակերի ամրացման ու նորոգման աշխատանքներ, որի շնորհիվ 1500 հա մերձափնյա գյուղատնտեսական նշանակության հողեր գերծ են մնացել ջրածածկումից ու ողողումներից:
 7. ՀՀ էներգետիկայի նախարարության նախաձեռնությամբ և USAID-ի տեխնիկական աջակցությամբ ԱՄՆ-ի Ազգային վերականգնվող էներգիայի լաբորատորիայի և տեղական «Սոլարեն» ՍՊԸ-ի կողմից 2003թ. մշակվել է «Հայաստանի հողմաէներգետիկ պաշարների քարտեզը»:
 8. Իրանի Իսլամական Հանրապետության ֆինանսական աջակցությամբ 2004թ. սկսվել և 2005թ.-ին ավարտվել է 2,6 ՄՎտ հզորությամբ հողմաէլեկտրակայանի կառուցումը Պուշկինի լեռնանցքում: Կայանը բաղկացած է 4 հողմակներից՝ յուրաքանչյուրը 660 կՎտ հզորությամբ: Նույն ծրագրի շրջանակներում 2004թ.-ի նոյեմբերից Սյունիքի մարզում սկսվել են մոնիտորինգային աշխատանքներ, որոնց արդյունքների հիման վրա նախատեսվում է կառուցել մինչև 20 ՄՎտ հզորությամբ հողմաէլեկտրակայան:
 9. KfW գերմանական բանկի աջակցությամբ 2005թ. սկսվելու է Սյունիքի մարզում 15 ՄՎտ-անոց հողմաէլեկտրակայանի տեխնիկատնտեսական հիմնավորման մշակումը՝ հետագայում այդ կայանը կառուցելու նպատակով:
 10. FAO-ի աջակցությամբ սկսվել է գյուղատնտեսական հողերի խոշորացման (կոնսոլիդացիայի) փորձնական ծրագիրը, որի ավարտը նախատեսվում է 2006 թվականին: Ծրագրի բաղադրիչներից են հասարակության տեղեկացվածության բարձրացումը, կադրերի ուսուցումը, տարածաշրջանի համար փորձնական հողօգտագործման սխեմայի և հողերի խոշորացման ռազմավարության մշակումը և իրականացումը:
 11. ՀՀ պետական բյուջեի հաշվին 2004-2005թթ. իրականացվել է ՀՀ Կոտայքի և ՀՀ Տավուշի մարզերում «Լքված հանքավայրերի պաշարների ուսումնասիրություն և հաշվառում» ուղղված դեգրադացված հողերի վերականգնմանը, որը նախատեսված է ԳԱԾ-ում:
 12. ՀՀ կառավարությունը 2003թ. օգոստոսի 14-ին ընդունեց «2004-2006 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» № 1030 որոշումը, որով նախատեսված են դրույթներ հողերը դեգրադացիայից պահպանելուն /անապատացումից/:
 13. ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին 2001-2005թթ. ժամանակահատվածում մշակվել են քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր, որոնք նպատակաուղղված լինելով տարածական պլանավորման կանոնակարգմանը, միաժամանակ ներառում են նաև կայուն հողօգտագործման ռազմավարության խնդիրներ:
 14. ՀՀ կառավարության 17.06.2004 թ. № 985-Ն որոշմամբ հաստատվել է «ՀՀ 2005-2007թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը», որով Բնապահպանության ոլորտում բյուջետային հատկացումները նպատակաուղղվելու են հետևյալ գերակա հիմնախնդիրների լուծմանը՝
 - Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնմանը,
 - կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության պահպանությանը,
 - անապատացման դեմ պայքարի գործընթացին,
 - վտանգավոր թափոնների էկոլոգիապես անվտանգ հեռացմանը:
 15. Գյուղատնտեսության ոլորտի քաղաքականության իրականացման համար 2005-2007թթ. ՀՀ պետական բյուջեի նախատեսվող ծախսերը նպատակաուղղված են գերակա նշանակություն ունեցող հետևյալ ներդրումային ծրագրերի իրականացմանը՝
 - հողերի մեխորատիվ վիճակի բարելավում
 - բնական կերհանդակների բարելավում
 - ջրարբիացում:

ԳԼՈՒԽ 7

ԶԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ, ՈՐՈՆՔ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ ԵՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ, ԵՎ ԴՐԱՆՑ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Շրջակա միջավայրի, այդ թվում անապատացման գործընթացների դիտարկման և ուսումնասիրության, տեղեկատվության հավաքի, վերլուծության և փոխանակման համակարգման համար, որպես մեխանիզմ մշակվել է էկոլոգիական չափանիշների ցանկի նախագիծը, որը նախատեսվում է ներկայացնել ՀՀ Կառավարության քննարկմանը: Չափանիշների ընտրության ժամանակ հաշվի են առնվել ԱԵԿԿԵԿ Երկրների համար էկոլոգիական չափանիշները, ինչպես նաև ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի...» Կոնվենցիայի Գիտության և տեխնիկայի Կոմիտեի առաջարկած չափանիշները: Էկոլոգիական չափանիշների ցանկը ներկայացված է Հավելված 4:

ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել ՀՀ-ում շրջակա միջավայրի պետական մոնիտորինգի հայեցակարգը, որի նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում շրջակա միջավայրի պետական մոնիտորինգի վիճակի բարելավումը, դրա իրականացման համար անհրաժեշտ գաղափարախոսության հենքի ստեղծումը: Հայեցակարգի խնդիրն է ՀՀ բնապահպանական պետական քաղաքականության համատեքստում շրջակա միջավայրի պետական մոնիտորինգի աշխատանքների իրականացման իրավական, տնտեսական, վարչական և մեթոդական հիմնադրույթների սահմանումը:

«Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի» շրջանակներում 2004-2006թթ. մշակվել և իրականացման փուլում են «Սևան» և «Դիլիջան» ազգային պարկերում կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրման ծրագրի» (մշակվել են մոնիտորինգի իրականացման մեթոդական ցուցումները և որոշվում են մոնիտորինգի ինդիկատորները):

ՀՀ-ում հստակ գործող երաշտի վաղորոք զգուշացման համակարգը բացակայում է: Սակայն մի շարք կազմակերպությունների կողմից որոշակի աշխատանքներ են իրականացվում այդ համակարգի ստեղծման/իրագործման ուղղությամբ:

1. Եվրոպական Հանձնաժողովի և ՄԱԿ-ի Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպության «Պարենային ապահովության գործողության համար տեղեկատվություն» ծրագրի շրջանակներում աշխատանքներ են տարվում նախազգուշացման համակարգի ուժեղացման ուղղությամբ: Պարենային ապահովության տեղեկատվության հասանելիության մակարդակի և որակի բարձրացման, ինչպես նաև նախազգուշացնող տվյալների կառավարման համար տեղեկատվական համակարգի ստեղծման նպատակով օգտագործվում են GIEWS Workstation, CountrySTAT և AgrometShell համակարգերը, որոնք հնարավորություն կտան համահունչ դարձնել հիմնական ցուցանիշների և տվյալների շտեմարանները ազգային և միջազգային տեղեկատվական համակարգերի հետ:
2. Հայպետհիդրոմետը 2003թ.-ից համագործակցում է ԱՊՀ Միջպետական Հիդրոոդերևութաբանության Խորհրդի Երաշտի Մոնիտորինգի Կենտրոնի հետ: Այդ համագործակցությունը հնարավորություն է ընձեռնում թողարկել երաշտի նախազգուշացման մոնիտորինգի տասնօրյակային տեղեկագիր, ինչպես նաև մասնակցել երաշտի, երաշտային երևույթների ազդուլիմայական բնութագրերի ֆոնդի ստեղծման աշխատանքներին:

Ազգային Ձեկույցի Հավելվածներ

Հավելված 1

ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության նկարագիրը

ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայով երկրի սույն նկարագիրը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության բնապայպանության նախարարությունը

Տարեթիվ. 26.05.2006թ.

Փոստային հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, 375010, Կառավարական 3-րդ մասնաշենք, 5-րդ հարկ

Հեռախոս. (374-10) 521099

Ֆաքս. (374-10) 585349


Էլեկտրոնային փոստ. interdpt@rambler.ru

1.Կլիմա


(1.1-1.4) Աղյուսակ 1

Լանդշաֆտներ	Արիդայնության ինդեքս	Տեղումների քանակը, նորմային համապատասխան (մմ)	Արիդայնության գործակից ըստ տեղադիրքի
Անապատային, կիսաանապատային (H = 850-1200մ)	< 0.25	230-300	1.0
Չոր տափաստանային (1200-1400 մ)	0.25-0.40	300-400	1.0-1.1
Տափաստանային (H = 1400-2300 մ)	0.5-0.8	450-500	1.1-1.7
Նոսր անտառային (H = 1700-2300 մ)	0.8-1.1	600-700	1.8-2.5
Մերձալպյան, մարգագետնատափաստանային (H = 2300-2500 մ)	1.1-1.25	700-800	2.6-3.0
Մերձալպյան և ալպյան մարգագետնային մերձնիվալ (H = 2.500-3900 մ)	1.25-1.5	900 >	3.1

Նկար 1. Արիդայնության գործակցի փոփոխությունը ՀՀ-ում ըստ տեղանքի բարձրության (H,մ)




Նկար 2. Լանդշաֆտների գնահատականը ըստ արհրայնության աստիճանի



- I Արիղ ($K_{am} < 1.0$) ոչ բավարար խոնավությամբ ($i > 3.3$) (ցածր լեռնային կիսաանապատային)
- II Սեմիարիղ ($K_{am} < 1.1-1.7$)
- A- անբավարար խոնավությամբ ($i = 2.6-3.2$) (2-ցածր լեռնային չոր տափաստանային)
- B- չափավոր անբավարար խոնավությամբ ($i = 1.6-2.5$) (3-ցածր լեռնային հետանտառային չոր տափաստանային և չորային նոսրանտառային; 5a- միջին լեռնային չափավոր չորային տափաստանային)
- III Թույլ արիղ ($K_{am} < 1.8-2.5$)
- A- չափավոր անբավարար խոնավությամբ ($i = 1.6-2.5$) (4-ցածր լեռնային անտառային, 5b-միջին լեռնային չափավոր խոնավ տափաստանային)
- B- օպտիմալ խոնավությամբ ($i = 1.0-1.5$) (6-միջին լեռնային անտառային)
- IV Սեմիհումիղ ($K_{am} < 2.6-3.0$) օպտիմալ խոնավությամբ ($i = 1.0-1.5$) (5c- միջին լեռնային խոնավ տափաստանային; 7-միջին լեռնային նոսրանտառային; 8- միջին լեռնային տափաստանացված մարգագետնային)
- V Հումիղ ($K_{am} < 3.1$) ավելցուկային խոնավությամբ ($i = 1$) (9-բարձր լեռնային մերձալպյան մարգագետնային; 10-բարձր լեռնային ալպյան մարգագետնային; 11--բարձր լեռնային մերձձնային)

Նկար 3. Տեղումների միջին տարեկան գումար



2. Բուսականություն և հողօգտագործում

2.1 NDVI տվյալները բացակայում են:

2.2 Բուսականությամբ ծածկված տարածքներ - 68,62 %


(վարելահողեր, բազմամյա տնկարկներ, տնամերձ և այգեգործական հողեր, արոտներ, խոտհարքներ, անտառածածկ տարածքների զումարը արտահայտված % ընդհանուր հողատարածքի նկատմամբ)

(2.3 Աղյուսակ 2

Հողօգտագործում		1997 թ. (հա)	2005 թ. (հա)
Մշակելի հողեր (վարելահողեր, բազմամյա տնկարկներ, տնամերձ և այգեգործական հողեր)		561 900	570 900
	Ջրովի	260 100	221 800
	Անջրտի	301 800	349 100
Արոտավայրեր		671 900	885 100
Խոտհարկներ		123 500	127 800
Անտառներ և թփուտներ		466 000	460 200
Մնացած հողերը		1 151 000	930 300

2.3 Մակերևույթի ալբեդոն

Նկար 4. ՀՀ տարածքի տարեկան միջին ալբեդոն



* Ներկայացված քարտեզը մշակված է Ռ.Սկրոչյանի, Ա.Խոյեցյանի, Վ.Խոյեցյանի կողմից «ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի.» կոնվենցիայի իրականացումը Հայաստանում» երրորդ ազգային զեկուլոցի պատրաստման շրջանակներում:

3. Զրային ռեսուրսներ

(3.1-3.4) Աղյուսակ 3

N	Պաշարներ և ջրօգտագործում	Տարեթիվ	Քանակը
1	Քաղցրահամ ջրերի պաշարներ	բազմամյա միջին	7257.0 (մլն. մ ³)
2	Մեկ շնչի հաշվով քաղցրահամ ջրերի պաշար	2004թ.	2257.0 (մ ³)
		2005թ.	2254.0 (մ ³)
3	Ջրօգտագործումը գյուղատնտեսությունում	2004թ.	1468,3 (մլն. մ ³)
4	Ջրօգտագործումը արդյունաբերությունում	2004թ.	177,4 (մլն. մ ³)

4. Էներգիա

(4.1, 4.2) Աղյուսակ 4

Օգտագործում, արտադրություն		2004թ.	2005թ.
Ընդամենը էներգիայի արտադրություն	կգ.Նէ/մարդ	114.9	127.3
	էներգիայի օգտագործումը գյուղատնտեսության մեջ		
Էլեկտրոէներգիայի արտադրություն	մլն.ԲՏԵ/հա	0.66	0.58
	մլն. կվտ-ժամ	261.0	229.0
Ջերմէներգիայի արտադրություն	մլն. կվտ-ժամ	3979.0	4350.0
	կգ.Նէ/մարդ	106.4	116.2
Ջերմէներգիայի արտադրություն	հազ.Գկալ	292.2	382.1
	կգ.Նէ/մարդ	8.5	11.1

* կգ.Նէ/մարդ` մեկ շնչի հաշվով էներգիայի օգտագործումը արտահայտված կիլոգրամ նաֆթային էկվիվալենտի:

(4.3) Աղյուսակ 5

Վերականգնվող աղբյուրներից էներգիա		2004թ.	2005թ.
ՀԷԿ-ի կողմից արտադրված ընդհանուր արտադրված էլեկտրոէներգիայի նկատմամբ	%	50,6	40.8
ՀԷԿ-ի կողմից արտադրված էլեկտրոէներգիայի օգտագործումը ըստ ոլորտների	Արդյունաբերությունում	%	22.9
	Բնակելի սեկտորում	%	36.1
	Գյուղատնտեսությունում	%	6.6

5. Հողերի դեգրադացիայի տեսակները

Աղյուսակ 6 *

Դեգրադացիայի տեսակները	1990-1999 թթ.		2000-2005 թթ.	
	հա	% ընդհանուր տարածքի նկատմամբ	հա	% ընդհանուր տարածքի նկատմամբ
Հողերի եռոզիա	1433489.0	56	-	-
Երկրորդային աղակալում	31014.8	1.2	35 000	1.3
Անտառահատում	>30 000	1	-	-

*Փորձագետների կողմից ներկայացված տվյալներ:

6. Վերականգնում

Աղյուսակ 7 *

Վերականգնվող հողերի տեսակները	1990-1999 թթ.	2000-2005 թթ.
Կուլտուրաների տակ գտնվող վերականգնված հողեր		19 000հա
Վերականգնված բնական կերհանդակներ		18300հա
Դեգրադացված անտառների վերականգնում		4.800հա

*Փորձագետների կողմից ներկայացված տվյալներ:

20001-2005թթ. ժամանակահատվածում Սևանա լճի մակարդակը բարձրացել 1.33մ:

7. Բնակչություն և էկոնոմիկա

(7.1) Աղյուսակ 8

Բնակչություն	մարդ	01.01.2005թ.	01.01.2006թ.
		3 215 800	3 219 400
քաղաքային	%	64.13	64.07
գյուղական	%	35.87	35.93

(7.2, 7.3) Աղյուսակ 9

Բնակչության տարեկան աճ	%	0.1
Կյանքի սպասվող երկարակեցություն	տարի	73.4

(7.4) Աղյուսակ 10

Մանկահասակների մահացության մակարդակը (1 000 նորածինների հաշվով)	2004թ.	2005
	11.6	12.3

7

(7.5,7.6) Աղյուսակ 11

ՀՆԱ (համախառն ներքին արդյունք) (մլն. ԱՄՆ դոլար)	/2004թ./	/2005թ./
	3551.1	4868.0
ՀԱԱ (համախառն ազգային արդյունք) (մլն. ԱՄՆ դոլար)	/2003թ./	
	864.5	

(7.7) Աղյուսակ 12

Աղքատության մակարդակը երկրում (բնակչության թվաքանակի նկատմամբ արտահայտված %) /տվյալների ուսումնասիրում տնային տնտեսությունում/	1998/1999թթ.	2004թ.
	56.1	34.6

(7.8) Աղյուսակ 13

Բուսական մթերքի արտադրություն		Քաշը	2004թ.	2005թ.
1.	Հացազգի	տոննա	456955.0	396180.0
2.	Կարտոֆիլ	տոննա	576315.0	564212.0
3.	Բանջարեղեն	տոննա	600698.0	663771.0
4.	Բոստանային կուլտուրաներ	տոննա	112959.0	117816.0
5.	Պտուղներ	տոննա	113706.0	315308.0
6.	Խաղող	տոննա	148870.0	164353.0

(7.9) Աղյուսակ 14

Անասնապահական մթերքների արտադրություն		Քաշը	2004թ.	2005թ.
1.	Անասնազլխի և թռչունների յուրացում (սպանդ/մորթ, կենդանի քաշ)	տոննա	94561.0	99100.0
2.	Կաթի արտադրություն	տոննա	555182.0	594600.0
3.	Զվի արտադրություն	մլն.հատ	563261.0	518200.0

8. Մարդկային հնարավորությունների զարգացում

(8.1-8.4) Աղյուսակ 15

			2004թ.	2005թ.
1.	Առաջնային դպրոց ընդունված և ավարտած անձանց մասը	%	93.9	90.0
2.	Գյուղական շրջանների զարգացման գործընթացի մեջ ներգրավված կանանց թիվը	հազար մարդ	108.6	89.0
3.	Գործազրկության մակարդակը	%	9.6	8.1
4.	Գործազրկության մակարդակը երիտասարդության մեջ (15-24 տարեկան)	%	1.1	0.7

(8.5-8.7) Աղյուսակ 16

1.	Անգրագիտությունը (15 տարեկանից բարձր) /	%	0.6
2.	Տղամարդկանց մեջ անգրագիտությունը (15 տարեկանից բարձր)	%	0.3
3.	Կանանց մեջ անգրագիտությունը (15 տարեկանից բարձր)	%	0.8

*2001թ.բնակչության հաշվառման տվյալներ

9. Գիտություն և տեխնիկա

9.1 Անապատացման խնդիրների հետ կապված աշխատանքներին մասնակցող գիտական հաստատությունների թիվը՝ ընդամենը – 14 , որոնք իրականացնում են ՀՀ պետական բյուջեից պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման միջոցով համապատասխան ծրագրեր (տես հավելված 2):

10. Օգտագործված գրականություն

1. Հայաստանի վիճակագրական տեղեկագիր: Երևան, 2004, 2005թթ.
2. Հայաստանի Հանրապետության ասոցիալ-տնտեսական վիճակը: Երևան, 2004, 2005թթ.
3. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրը և բնական ռեսուրսները: Վիճակագրական անալիտիկ հաշվետվություն: Երևան, 2004, 2005թթ.
4. Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը: Վիճակագրական անալիտիկ հաշվետվություն: Երևան, 2004, 2005թթ.
5. Հայաստանի սոցիալական վիճակը և չքավորությունը: Վիճակագրական անալիտիկ հաշվետվություն: Երևան, 2001, 2005թթ.
6. Էներգետիկ վիճակագրություն, որոշում, չափման միավորներ և վերահաշվարկման գործակիցներ: ՄԱԿ, Նյու-Յորք, 1978թ.
7. 2001թ. Հայաստանի Հանրապետության բնակչության հաշվառման արդյունքները: Երևան, 2003թ.
8. Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման հաշվետվության (հողային հաշվեկշիռի) մասին ՀՀ կառավարության 22.12.2005թ. N2243-Ն որոշում:
9. Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռն ըստ կատեգորիաների և հողատեսքերի՝ 1997թվականի հունվարի 1-ի դրությամբ հաստատելու մասին ՀՀ օրենք, Երևան 7.10.1998թ. ՀՕ-249:
10. «Անապատացման պատճառա-հետևանքային կապերը և տարածաժամանակային գնահատման սկզբունքները Հայաստանի Հանրապետությունում» Աշխարհագրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան 2004թ:
11. Հայաստանում անապատացման դեմ պայքարի ԳԱԾ, Երևան 2002թ.

«Անապատացման դեմ պայքարի...» կոնվենցիայի ներքո ՀՀ պետական բյուջեից պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման միջոցով իրականացվող ծրագրեր

Ծրագրի անվանումը	
1.	ՀՀԳԱԱ Երկրաբան.ինստ. Ակտիվ խզումները և Հայաստանում ու հարակից տարածքներում բնական վտանգների համալիր գնահատումը
2.	ՀՀ Տավուշի մարզի երկրադինամիկական արտածին երևույթների ուսումնասիրում, պոլիմերահանքային համակարգերի ջրակլանիչ տեխնոլոգիաների մշակում և փորձարկում
3.	ՀՀԳԱԱ Էկոլոգանոսֆերական հետազոտ.կենտրոն Բնական և տեխնածին ռադիոակտիվության ուսումնասիրությունը Արարատյան դաշտավայրում
4.	Քիմիական տարրերի տեղաշարժը և կուտակման առանձնահատկությունները տեխնածին ազոտոցենոզներում
5.	ՀՀ տարածքի խոշոր մաշտաբի (1:50 000) լանդշաֆտների հետազոտում և քարտեզագրում, կապված ռելիեֆային ինդուստրիայի զարգացման հետ՝ Արարատյան գոգովորության օրինակով
6.	Ծանր մետաղների միգրացիան հող-բույս համակարգում
7.	Քիմիական տարրերի կենսաերկրաքիմիական հոսքի տարողությունը էկոհամակարգերում և նրա օպտիմիզացման ուղիները
8.	Կոլեկտիվ բազմամետաղային խտանյութի համալիր վերամշակման անթափոն տեխնոլոգիայի մշակում և փորձարկում
9.	Ծանր մետաղների ասոցիացիաների հետազոտումը քաղաքակենտրոնացված գոտիներում
10.	ՀՀԳԱԱ Երկրաֆիզ.և ինժեներա. սեյսմաբանութ.ինստ. Հայաստանի տարածքի երկրակեղևի վերին շերտի կառուցվածքի համալիր երկրաֆիզիկական մոդելի կառուցումը՝ հանքային և էներգետիկ ռեսուրսների որոնման նպատակով
11.	ՀՀ Գյուղ.նախ. երկրագործության և բույսերի պաշտպ.գիտ.կենտ. Անտառների գլխավոր վնասակար օրգանիզմների դեմ էկոլոգիական սկզբունքով ինտեգրացված պայքարի մշակում
12.	Կարճ շրջապտույտով ցանքաշրջանառությունների մշակում և մշակաբույսերի աճեցման մեքենայացման միջոցների կատարելագործում
13.	Գյուղատնտեսության արտադրության ոլորտում ռադիացիոն և քիմիական մոնիտորինգ, կենսաբանական տեստ մեթոդների մշակում և կիրառում
14.	Ցորենի և կարտոֆիլի ազոտային սննդառության օպտիմիզացումը, շրջակա միջավայրի աղտոտումը նվազեցնելու և էկոլոգիապես մաքուր արտադրանքի ստացումը Արմավիրի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզի պայմաններում
15.	ՀՀ Գյուղ.նախ.Անասնաբուծ. և անասնաբուծ.գիտ.կենտրոն Մշակել և ներդնել Արարատյան հարթավայրի պայմաններում կանաչ կոնվեյերի կազմակերպման և մարզագետնատափաստանային գոտու բնական կերհանդակների արդյունավետության բարձրացման եղանակներ
16.	ՀՀ Գյուղ. նախ. Հողագիտության, ագրոքիմիայի և մելորացիայի գիտական կենտրոն ՀՀ ոռոգելի երկրագործության գոտիների հողային և ջրային ռեսուրսների մելիորատիվ-էկոլոգիական խմբավորումը
17.	«Կատարելագործել հողերի բերրության պահպանման և մշակաբույսերի պարարտացման համակարգը» /Արմավիրի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի, որոշ գյուղացիական տնտեսությունների օրինակով/
18.	Մշակել Արարատյան հարթավայրի հանքայնացված ջրերի որակի բարելավման համակարգ, վերջինիս ոռոգման նպատակով օգտագործման համար
19.	Գյուղատնտեսության վարման արդի պայմաններում արդյունավետ հողապաշտպան համալիր միջոցառումների մշակումը և ներդրումը ՀՀ լեռնատափաստանային հողերի գոտում
20.	Ուսումնասիրել Արարատյան հարթավայրի մշակելի հողերի դեգրադացման պատճառները, մշակել դրանց բարելավման ու արդյունավետ օգտագործման համալիր միջոցառումները
21.	Լոռվա մարզի տեխնածին աղտոտված հողերի էկոլոգիական դիտարկումը (մոնիտորինգը) և բերրիության ցուցանիշների փոփոխման գնահատականը
22.	Հայաստանի Հանրապետության Սևանի ավազանի և Ջանգեզուրի բնագյուղատնտեսական մարզերի դեգրադացիայի ենթարկված հողերի քարտեզագրումը և դրանց դեմ պայքարի համալիր միջոցառումների մշակումը

23.	Ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ Գեոինֆորմացիոն համակարգերի (GIS) կիրառումը ջրային ռեսուրսների կառավարման և օգտագործման խնդիրներում
24.	Սելաֆային կոշտ հոսքի որոշումը սակավաթիվ բնօրինակային չափումների տվյալներով
25.	Հայկական ագրարային համալսարան Գյուղատնտեսական վարման տեխնոլոգիաների մշակումը ռադիոակտիվ վարակման տեսանկյունից (Արարատյան հարթավայրի օրինակով)
26.	Ստորերկրյա ջրերի ռեժիմների կանխառեսումը ուղղաձիգ դրենաժի աշխատանքի ֆոնի վրա
27.	Երևանի պետական համալսարան Բնական և մարդածին գործոնների ազդեցությունը ՀՀ լանդշաֆտների զարգացման ընթացքի վրա, վերջիններիս փոփոխության գնահատումը և բարելավման ուղիների մշակումը
28.	Վտանգավոր բնական և մարդածին պրոցեսների ազդեցությունը քաղցրահամ ջրերի վրա
29.	ՀՀ իռիգացիայի և մելիորացիայի ատլասի 3,4,5-րդ գլուխների մշակում
30.	ՀՀ լեռնային և մերձսահմանային շրջանների գեոէկոլոգիական իրադրությունը և կայուն զարգացման հիմնախնդիրները
31.	Բնական լանջերի կայունության գնահատման, սողանքային երևույթների ուսումնասիրության և կանխագուշակման, հակասողանքային միջոցառումների արդյունավետության որոշման համալիր մեթոդիկայի մշակում
32.	Գյուղատնտեսության էկոնոմիկայի ԳՀԻ Մասնավորեցված գյուղատնտեսական հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները
33.	Գյումրիի սելեկցիոն կայան Ագրոտեխնիկական մի քանի միջոցառումների ազդեցությունը աշնանացան ցորենի և զարնանացան զարու հեռանկարային սորտերի բերքատվության և հատիկի որակական հատկանիշների վրա Շիրակի գոտում
34.	Սելեկց.նվաճումն.փորձարկման,պաշտպ.և սերմ.որակի ստուգմ.կենտ.,ՊՓԲԸ ՀՀ Շիրակի, Լոռու, Սյունիքի և Արագածնոտի մարզերում գյուղատնտեսական մշակաբույսերի շրջանացման գոտիների ժամանակակից պայմաններին համապատասխանող սխեմայի մշակում
35.	Գյուղատնտեսության մեքենայացման և էլեկտրաֆիկացիայի ԳՀԻ, ՓԲԸ Աղուտների և գերխոնավ հողերի մելիորատիվ մշակության ագրոտեխնիկական պահանջների ճշգրտում և բազմանշանակ փխրիչների մշակում
36.	ՀՀԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ Էկոլոգիական կրթության նոր ռազմավարությունների մշակումը ինտեգրացված դասընթացներում թեմատիկ միավորներով

Ա մ փ ո փ տ վ յ ա լ ն ե ր

Անապատացման դեմ պայքարի միջոցառումների իրականացմանն ուղղված
 ՀՀ 2002-2006թթ. պետական բյուջեներով նախատեսված ծախսերի

h/h	Աշխատանքի (ոլորտի) անվանումը	Նախատեսված միջոցները ըստ տարիների (ԱՄՆ դոլար)				
		2002թ.	2003թ.	2004թ.	2005թ.	2006թ.
1.	Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և նորոգում, սելավատարներ, հակահողեղային միջոցառումներ		778 000	889 000	714 000 94 000	740 000 78 000 820 000
2.	Գրունտային ջրերի մակարդակի և որակի որոշում		78 000	45 000	167 000	193 000
3.	ՀԲ-ի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգի զարգացման ծրագրի իրականացում	4 407 000 416 000	8 344 000	6 480 000	7 309 000	3 731 000
4.	«Հիդրոտեխնիկական կառուցվածքներ Որոտան գետի վրա» օբյեկտի շինարարություն		3 438 00			
5.	«Արփա-Սևան» թունելի շահագործում, նորոգում	120 000	704 000	827 000		
6.	ՀԲ-ի աջակցությամբ իրականացվող Պատվարների անվտանգության ծրագիր	10 758 000 1 184 000	6 322 000	4 013 000	4 013 000 1 716 000	4 616 000 2 271 000
7.	Անտառային տնտեսություն	253 000	253 000	416 000	889 000	2 527 000
8.	Բնության հատուկ պահպանվող տարածքներ	331 000	438 000	447 000	538 000	1 138 000
9.	Հակասողանքային միջոցառումներ	176 000	18 000	338 000	204 000	
10.	Հողերի ագրոքիմիական հետազոտության բարձրացման միջոցառումներ			78 000	78 000 45 000 358 000	82 000 356 000 369
11.	Շրջակա միջավայրի մոնիթորինգ			40 000	84 000	13 000 71 000 182 000
12.	ՀԲ-ի աջակցությամբ իրականացվող բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագիր		140 000 1 297 000 196 000 87 000	2 376 000 2 144 000	1 811 000 1 707 000	2 168 000 811 000
13.	Հետազոտական աշխատանքներ				20 000	
14.	Ջրային ռեսուրսների կայուն կառավարում				56 000 51 000	82 000 240 000
15.	Ոռոգման համակարգի նորոգում					527 000
16.	Թափոնների ուսումնասիրում					13 000 9 000

Ց Ա Ն Կ

Շրջակա միջավայրի և բնական պաշարների մոնիտորինգի էկոլոգիական ինդիկատորների և դրանց վերաբերյալ տվյալների տրամադրման համար պատասխանատու մարմինների ցանկ

h/h	Ինդիկատորի անվանում	Տվյալների տրամադրման պատասխանատու մարմին
	<u>Մթնոլորտի աղտոտում</u>	
1.	Աղտոտող նյութերի համախառն արտանետումներ անշարժ աղբյուրներից, այդ թվում՝ ծծմբի երկօքսիդ (SO ₂), ազոտի օքսիդներ (NO _x), ածխածնի օքսիդ (CO), կոշտ մասնիկներ, ծանր մետաղներ, ցնդող օրգանական միացություններ (SOU)	Բնապահպ.նախ.
2.	Աղտոտող նյութերի համախառն արտանետումներ շարժական աղբյուրներից,այդ թվում՝ ծծմբի երկօքսիդ (SO ₂), ազոտի օքսիդներ (NO _x), ածխածնի օքսիդ (CO), կոշտ մասնիկներ, ցնդող օրգանական միացություններ (SOU), ծանր մետաղներ	Բնապահպ.նախ.
3.	Գետնամերձ օզոնի պարունակություն	Բնապահպ.նախ.
4.	Մթնոլորտային օդում վնասակար նյութերի՝ ազոտի օքսիդներ (ազոտի երկօքսիդի հաշվարկով), ծծմբի երկօքսիդ, ածխածնի օքսիդ, սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի (ՍԹԿ) գերազանցման դեպքեր /քանակ/	Բնապահպ.նախ.
5.	Ազոտի օքսիդների, ծծմբի երկօքսիդի, ածխածնի օքսիդի, ցնդող օրգանական միացությունների (SOU), կապարի (Pb) արտանետման ինտենսիվություն՝ 1քառ.կմ տարածքի և 1 բնակչի հաշվարկով	Բնապահպ.նախ.
	<u>Կլիմայի փոփոխություն</u>	
6.	Հիմնական ջերմոցային գազերի, ածխածնի երկօքսիդ (CO ₂), մեթան (CH ₄), ազոտի մոնօքսիդ (N ₂ O), արտանետումների քանակ	Բնապահպ.նախ.
7.	Միջին տարեկան ջերմաստիճան	Բնապահպ.նախ.
8.	Տեղումների միջին տարեկան քանակ	Բնապահպ.նախ.
9.	Ձյունածածկույթ	Բնապահպ.նախ.
10.	Անտառների աճ	Բնապահպ.նախ.
11.	Վեգետացիոն շրջանի տևողություն	Բնապահպ.նախ.
12.	Գետերի տարեկան հոսք	Բնապահպ.նախ.
	<u>Ջրային ռեսուրսներ</u>	
13.	Ընդհանուր ջրառ՝ ըստ ճյուղերի	Տարածք. կառ. նախ. ջր. տնտ. պետ.կոմիտե
14.	Ջրի կորուստ տեղափոխման ժամանակ՝ %-ով ընդհանուր ջրառից	Տարածք. կառ. նախ. ջր. տնտ. պետ.կոմիտե
15.	Գումարային ջրօգտագործում՝ ըստ ջրօգտագործման տեսակների (հազ.մ ³ /տարի)	Տարածք. կառ. նախ. ջր. տնտ. պետ.կոմիտե
16.	Հոսքաջրերի գումարային արտահոսք՝ ըստ ճյուղերի (հազ. մ ³ /տարի)	Տարածք. կառ. նախ. ջր. տնտ. պետ.կոմիտե
17.	Ջրի ընդհանուր պաշարներ ջրամբարներում	Տարածք. կառ. նախ. ջր. տնտ. պետ.կոմիտե
18.	Մաքրման համակարգերի հզորություն	Տարածք. կառ. նախ. ջր. տնտ. պետ.կոմիտե

19.	Չմաքրված արտահոսքերի ծավալ	Տարածք. կառ. նախ. ջր. տնտ. պետ. կոմիտե
20.	Օրգանական նյութերի քանակ արտահոսքում՝ ըստ թթվածնի կենսաբանական պահանջի (ԹԿՊ ₅)	Բնապահպ. նախ.
21.	Ծանր մետաղների արտահոսք	Բնապահպ. նախ.
22.	Գետերի ջրում ԹԿՊ ₅ -ի և ամոնիում իոնների պարունակություն	Բնապահպ. նախ.
23.	Նիտրատներ և ֆոսֆատներ գետերում (սնուցող նյութեր)	Բնապահպ. նախ.
24.	Քաղցրահամ ջրերի պաշարներ (մակերևութային և ստորերկրյա)	Բնապահպ. նախ.
25.	Ջրերի աղտոտվածության ցուցանիշ	Բնապահպ. նախ.
	<u>Հողային ռեսուրսներ</u>	
26.	Հողատարածքներ, որոնք զբաղեցված են արդյունաբերական և կենցաղային թափոնների կուտակարաններով	Բնապահպ. նախ.
27.	Փոփոխություններ գյուղատնտեսական հողատարածքների՝ ըստ կարգերի և հողատեսքերի	Գյուղ. նախ.
28.	Հողատարածքներ, որոնք խախտված են օգտակար հանածոների արդյունահանման հետևանքով	Բնապահպ. նախ.
29.	Հողերի նպատակային նշանակության փոփոխություն ըստ մարզերի	Բնապահպ. նախ.
30.	Էրոզիայի ենթարկված գյուղատնտեսական հողատարածքներ	Գյուղ. նախ.
31.	Հողերի աղտոտումը արտադրական և կենցաղային թափոններով, քիմիական և ռադիոակտիվ նյութերով	Բնապահպ. նախ.
32.	Խախտված և դեգրադացված հողերի վերականգնում	Բնապահպ. նախ.
33.	Հողերի դեգրադացումը ջրային և հողմային հողատարումից, ողողումներից, ճահճացումից, կրկնակի աղակալումից, կարծրացումից, սողանքներից, անապատացումից	Բնապահպ. նախ.
34.	Հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանում, պահպանում և օգտագործում	Բնապահպ. նախ.
	<u>Կենսառեսուրսներ և կենսաբազմազանություն</u>	
35.	Բնության հատուկ պահպանվող տարածքների մակերես՝ ըստ կարգավիճակների, %-ը հանրապետության ընդհանուր տարածքի	Բնապահպ. նախ.
36.	Բուսական և կենդանական աշխարհի տեսակների քանակ (տարածքի 1քառ. կմ հաշվով)	Բնապահպ. նախ.
37.	Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների տեսակային կազմ, քանակություն և մասնաբաժին հանրապետության տարածքի բույսերի և կենդանիների ընդհանուր տեսակային քանակության մեջ	Բնապահպ. նախ.
38.	Հազվագյուտ և անհետացող բույսերի և կենդանիների տեսակներ, դրանց մասնաբաժինը հանրապետության տարածքում գրանցված տեսակների ընդհանուր թվից	Բնապահպ. նախ.
39.	Անհետացող ձկնատեսակների վերարտադրության ծավալներ	Բնապահպ. նախ.
40.	Չկնային պաշար ըստ տեսակների	Բնապահպ. նախ.
41.	Անտառային հողերի ընդհանուր մակերես՝ %-ով հանրապետության ընդհանուր տարածքի նկատմամբ	Գյուղ. նախ.
42.	Անտառավերականգնում, անտառատնկում և զբաղեցված տարածք	Գյուղ. նախ.
43.	Անտառային հրդեհներ (քանակ, մակերես, ոչնչացված փայտի ծավալ)	Գյուղ. նախ.
44.	Տարեկան ծառահատում (%-ով տարեկան աճի նկատմամբ)	Գյուղ. նախ.
45.	Վնասված և հիվանդագին օջախներով անտառային տարածքներ	Գյուղ. նախ.
46.	Հատուկ պահպանվող անտառատարածքների մակերես	Գյուղ. նախ.
47.	Բնական անտառների մակերես	Գյուղ. նախ.
48.	Անտառային բույսերի անհետացող տեսակներ	Գյուղ. նախ.

49.	Քաղաքներում մեկ շնչին ընկնող կանաչ տարածքների մակերես	Երևանի քաղ.պետարան, Տարածք. կառ. նախ. (մարզպետարաններ)
	<u>Թափոններ</u>	
50.	Առաջացած թափոնների ընդհանուր ծավալ, այդ թվում՝ կենցաղային, արտադրական	Բնապահպ. նախ.
51.	Առաջացած թափոնների ծավալներ ըստ վտանգավորության դասերի	Բնապահպ. նախ.
52.	Թափոնների օգտագործում/օգտահանում	Բնապահպ. նախ.
53.	Թափոնների հեռացում (գումարային և ըստ վտանգավորության դասերի)	Բնապահպ. նախ.
54.	Թափոնների առաջացման ինտեսիվություն՝ թափոնների ընդհանուր ծավալ համախառն ներքին արտադրանքի մեկ միավորի նկատմամբ	Բնապահպ. նախ.
55.	Թափոնների վերամշակման արտադրական հզորություն	Բնապահպ. նախ.
	<u>Էներգետիկա</u>	
56.	Էներգիայի արտադրության մեջ վերականգնվող էներգոռեսուրսի մասնաբաժին	Էներգ. նախ.
57.	Էներգիայի օգտագործման ընդհանուր ծավալը ըստ ռեսուրսի տեսակների	Էներգ. նախ.
58.	Ընդհանուր էներգատարողունակություն՝ տեսակարար էներգասպառում համախառն ներքին արտադրանքի մեկ միավորի նկատմամբ	Էներգ. նախ.
	<u>Գյուղատնտեսություն</u>	
59.	Ջրի օգտագործում գյուղատնտեսության մեջ	Գյուղ. նախ.
60.	Հանքային պարարտանյութերի օգտագործում	Գյուղ. նախ.
61.	Թունաքիմիկատների և պեստիցիդների օգտագործում	Գյուղ. նախ.
62.	Արտավայրերի լիարժեքություն՝ կերամիավորներով, խտտաբաղադրանքների բերքատվություն (գ/հա)	Գյուղ. նախ.
	<u>Տրանսպորտ</u>	
63.	Ավտոմեքենաների ընդհանուր քանակներ՝ ըստ միջազգային ավտոտրանսպորտային միջոցների դասակարգման տեսակների և նշված կատեգորիայի ավտոտրանսպորտային միջոցների քանակներ՝ ըստ օգտագործվող վառելիքի տեսակների:	Տրանսպ. և կապի նախ.
64.	Տեղափոխությունների ծավալի դինամիկա ըստ տրանսպորտի տեսակների	Տրանսպ. և կապի նախ.
65.	ճանապարհային ցանցի խտություն	Տրանսպ. և կապի նախ.
66.	Տրանսպորտային միջոցների միջին տարիք ըստ նրանց տեսակների	Տրանսպ. և կապի նախ.
	<u>Սոցիալ տնտեսական ինդիկատորներ</u>	
67.	Բնակչության թվաքանակ և խտություն	Ազգային վիճ. ծառ.
68.	Բնապահպ.՝ պետբյուջեից ֆինանսավորվող, միջոցառումների/ծրագրերի գծով ծախսեր՝ <ul style="list-style-type: none"> • մլն.դրամ, • տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ, • տոկոս՝ բնապահպ. և բնօգտ. վճարների պետ.բյուջե ընդհանուր մուտքերի նկատմամբ 	Բնապահպ.նախ.

69.	Բնապահպանական և բնօգտագործման վճարներ <ul style="list-style-type: none"> • մլն.դրամ, • տոկոս՝ ՀՆԱ նկատմամբ, • տոկոս՝ պետական բյուջեի եկամուտների նկատմամբ 	Բնապահպ. նախ.
70.	Սևանա լիճ Ջրային հաշվեկշիռ	Բնապահպ. նախ.
71.	Մակարդակ	Բնապահպ. նախ.
72.	Ջրի քափանցելիություն, նիտրատների, ֆոսֆատների, ԹԿՊ ₅ -ի և ամոնիում իոնների պարունակություն	Բնապահպ. նախ.
73.	Ջրի աղտոտվածության ցուցանիշ	Բնապահպ. նախ.
74.	Առողջապահություն Բնակչության ընդհանուր հիվանդացություն	Առողջ. նախ.
75.	Մինչև 14 տարեկան երեխաների հիվանդացություն	Առողջ. նախ.
76.	Բնակչության ընդհանուր մահացություն	Առողջ. նախ.
77.	Մինչև 1 տարեկան երեխաների մահացություն	Առողջ. նախ.

Հավելված 5

ՀՀ անցկացված և նախատեսվող անտառվերականգնման աշխատանքների ծավալները

Աշխատանքի անվանումը	2001ր.	2002ր.	2003ր.	2004ր.	2005ր.
	կատարվել է	կատարվել է	կատարվել է	կատարվել է	կատարվել է
Անտառտնկում, հա	272,75	235	260,1	583,5	600
Անտառի բնական աճին աջակցություն, հա	750	605	402	145	1500
Բնական վերածի վերականգնմանն աջակցություն	109			1648,3	2700
Ընդամենը, հա	1131,75	840	662,1	2376,8	4800